

ԲԱՐԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ՊՈՏՄՈԿԱՆ ՋՐԴԻՆՑՈՒՄԸ.

ՊՐՕՖ. ՊԵՏՐԻ.

ԳԼՈՒԽ Ա.

Մարդու մասին գիտութեան խնդիրները. նրա գոտարարքները. — Մարդու մասին գիտութիւնը նախնական է նորակիրթ ժողովրդների մօտ. — Ուղիներն է հազմապէսները. — Կերպար. Ուրարի. Կիպոպիտ. Ալիմի. Մախար. Իմպիւլի. Յիմպիւլի. Արիստալի. Յալի. — Չափական գաղթի նպատակն է հասարակական վարդապետութիւնները. — Միջին գաղթի ընդհանուր բնութարարք. — Այնպիսիքական մեծ գիտերի պարալիսիք է նրա կարգադրանքը. — Եւ պարալիսիսիսիք ինչպէս էին վերաբերում գիտի նախնական մարդը. — Նոր շարժումներ. — Քիմի. — Մարդակազմութեան է բնութարարութեան գործարարը. — Կարգադրութիւն է ընկերարարութիւն. — Յիմպի. Սպիւլի. Լիկի. Յիմ. Կարգիւ. Կարգ. Ուարի.

Մարդարանութիւնը մարդու մասին խօսող մի գիտութիւն է. մարդարանութիւնը մարդու բնական պատմութիւնն է:

Մարդու մասին մեր բոլոր գիտեցածները միասեղեղու համար, առում է Բէրը, մարդարանութիւնից աւելի լարմարուող անուն չէր կարելի գտնել, որովհետեւ այս բանիւր նշանակութեամբ ընդգրկում է մարդու ամբողջ կեանքը¹⁾. Մարդարանութեան այս որոշման մէջ շատ լաւ արտայայտուած են նրա խնդիրները. այս մի քանի խօսքերում երե-

¹⁾ E. E. V. Duer. Vorlesungen über Anthropologie. Königsberg, Bornträger. 1824, B. I. S. 5.

ում են և այն էական արգելքները, որոնց պէտք է լազթէր մեր գիտութիւնն իւր պատմական զարգացման ընթացքում:

Գիտական միտքը շատ զգուշութեամբ է ննում. շատ զանգաղութեամբ զարգանում և միայն երկար կռուից յետոյ կրթուած մարդկութեան ընդհանուր սեպհականութիւնը գտնում: Մեր դարու մասնույններն իրենց ժամանակակիցներէ մտքերում մի լայնի գիտական միտք ամրապնդելիս՝ զարմացքով նկատում են այդ մտքի փայլփումը նախնի խաւար դարերում: Ամէն մի գիտական մեծ գրութիւն իւր մեծ անցեալը, իւր ոգևորուած աւետարներները, իւր մարտիրոսներն ունի:

Մարգու մասին գիտութիւնը, որպէս որոշ դարաշրջանների հայեցողութեան հետեանք, ցուցնում է իւր մէջ մարդկային մտքի բոլոր ելևէջը: Այս գիտութիւնը չափազանց բազմազան և դիրքափոխ է, բայց միշտ լի է ներքին բովանդակութեամբ. նա միշտ իւր դարաշրջանի մտաւոր և բարոյական կեցութեան բնորոշ նշանն է հանգիստանում:

Մարգու մասին գիտութիւնն սկիզբն է առնում, հէնց որ մարզն սկսում է մասնել իւր մասին, իւր մերձաւորի մասին, բնութեան մէջ իւր բռնած գրութեան մասին: Իւր շրջապատող միջավայրը զննելով և իւր աշխարհագրական հորիզոնն ընդլայնելով՝ մարզն ուսումնասիրում է ոչ միայն իւր նենդավայրը, այլ և իւր և իւր ցեղակիցների, ինչպէս նաև ստոր ազգերի բնութիւնը ¹⁾: Սակայն միայն այժմս է այս գիտութիւնը գիտական կերպարանք ստանում: Այժմեան փառահեղ և ահագին մարդարանական շէնքի համար պէտք էր շատ քար կրել: Այս քարերը մարգու ֆիզիքական կամ հոգեկան կեանքն ուսումնասիրող մի շարք գիտութիւնների հետեանքներն են:

Մարդարանութիւնը՝ որպէս մարգու մասին եղած տեսութիւնների ամփոփումն՝ միշտ գոյութիւն է ունեցել ²⁾:

¹⁾ B. Hertz, *Zeichn. naturwiss. topograph. Handb. d. Ethn. Ppoc. Europ.* Odss. T. XXIII. 1887, стр. 692.

²⁾ A. Bastian, *Vorgeschichte d. Ethnologie.* Berlin. Dümmler. 1881.

Նա հին է, ինչպէս ինքը մարդկութիւնը, նա ապրում է մարդկային ընդհանուր կեանքով. անդադրում, բայց փոփոխակի բաղձով պարում է մարդկութեան վախճանական խընդրի լուծումը, այսինքն աշխատում է բացառել թէ՛ սրտեղից է մարդը, ինչ է և ուր է ուղղում:

Երկար ժամանակ մարդու, այս ամենակարեւոր բնական երևոյթի մասին գիտութիւնն անտես էր առնուած: Սրան նպաստում էր այն, որ բնական գիտական տեղեկութիւններ չլինելով մարդու մասին գիտական հիմունքներն անմատչելի էին և ուխտած, պապերից ժառանգած աւանգութիւնների հետ ընդհարումն ունենալուց վախենում էին. որան նպաստում էր, վերջապէս, մարդու բնական ձգտումն՝ ամենից առաջ և ի վնաս սովորական, բնական և ըստ երևութին այնքան հասկանալի առարկաների, զբաղուիլ հէնց այն երեւոյթներով, որ ամենից աւելի հեռու են մարդուց, ամենից աւելի հազուադէպ են և ամենից աւելի զրգուում են նրա երեւակայութիւնը: Շատ անգամ գիտնականները զանգատուել են թէ պակասում է մարդու մասին եղած բոլոր տեղեկութիւններն ընդհանրացնող մի գիտութիւն: Վեթէ աշխարհին մէջ ամէն բան ունի իւր փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը, արդեօք այն, որ ամենից աւելի վերաբերում է մեզ, այսինքն ամբողջ մարդկութեան պատմութիւնը, չպէտք է ունենայ իւր փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը, բացականչում է Հերդերը, «Ideen zur Philosophie der Geschichte der Menschheit» կոչուած նոյն իսկ ներկայիս համար թանգազին գրքի հեղինակը: Պատմութեան միւս բոլոր նիւղերը, ինչպէս օր. արուեստների, գիտութեանց և նշանաւոր գիւտերի պատմութիւնները, ցոյց են տալիս մարդու միայն մի որոշ կողմը և կամ նկարագրում են սոսկական յատկութիւններն ու առանձին գործեր. և միայն մարդկութեան պատմութիւնն է ընդգրկում ամբողջ մարդը և ցոյց տալիս նրան այնպէս, ինչպէս նա եղել է բոլոր ժամանակներում և աշխարհին բոլոր մասերում: Այսպէս է ապացուցանում մարդու մասին գիտութեան անհրաժեշտութիւնը յայտնի բազմափէպ և

ընդմեաւոր հեղինակ Մէյները: Այս կշտամբանքին միացնում է իւր շախնը Կիւվիէ, իւր զարու ամենահեղինակաւոր բնապատմաբանը: Վերական գիտութիւնների մէջ ոչ մի նիւզ չը կայ, ոչ կենդանաբանութիւնը, ոչ բուսաբանութիւնը, ոչ հանքաբանութիւնը, ոչ երկրաբանութիւնը, որի յառաջագիմութեան համար աշխատած չլինին նանապարհորդները, այն ինչ գրանք համարեա միշտ անտես են առել մարգը:

Սակայն այս արգարացի զանգաւանների պատճառով չլէտք է մոռանալ, որ մարգու մասին գիտութեան առանձին մասեր, որ ուսումնասիրում են մարգու կազմուածքը, անհատի բնախօսական և հոգեկան կեանքը, և կամ ընդհանրացնում են այս ուսումնասիրութիւնն ամբողջ մարգկութեան վրայ, մշակուել են կամաց կամաց և աստիճանաբար:

Ուր միայն կրթական ոյժը բնական է հոգին՝ այնտեղ ամենուրեք տարածուած և աճում են այն ահագին, բազմաճիւղ ծառի արմատներն, որ այժմ կոչւում է մարգաբանութիւն, մարգու մասին գիտութիւն: Բէր արգարացի է նկատում, ասելով, թէ պատմութիւնը բարձր խօսում է մարգաբանութեան արժէքի մասին, որովհետեւ նա վկայում է մեզ, որ քաղաքակրթուիլ սկսող ազգերի մէջ՝ հասունացած խելքերն գրադեցնող առաջին հարցերը՝ մարգու ծագման և բնութեան մէջ նրա բռնած գիրքի մասին են լինում: Վիլհելմ անգամ կարելի է պնդել, շարունակում է նա, որ քաղաքակրթութիւնը միայն այն ժամանակ է սկսւում, երբ մարգն իւր մասին անդեկութիւններ է ստանում¹⁾:

Նախնական մարգը բնազգամբ ամէն մի եկուորի օտար, թշնամի էակ է համարում, մինչքեւ թառլ հաւաստեանալով, որ նա վտանգաւոր չէ, շուտով ընտելանում է նրա, իւր համար նոր, արտաքինին և յօժարութեամբ ընդունում նըրան իւր շրջանը²⁾: Մարգն ինքնաճանաչութեան առաջին աստիճանում զոհում է իրեն բնութիւնից, միւս կենդանի

¹⁾ K. E. V. Baer, *Vorlesungen über Anthropologie*, էջ. 3.

²⁾ E. Petri, *Verkehr und Handel in ihren Ursprüngen*. St. Gallen, Zollikofer, 1888 էջ. 3 և 4.

էականերից, շատ անգամ կոչելով իրեն ուղղակի մարգա ¹⁾։ Նորարարող քաղաքակրթութիւնը մարգու մասին խնդրին վերաբերւում է անհամեմատ մեկին և գիտակցօրէն, իւր մատաղ ուժով և մեծ ապագայի վրայ ունեցած յոյսերով հպարտացած, նա բաժանում է իրեն շրջապատող ստորակիրթ միջավայրից։ Նրա ներկայացուցիչներն ընտրեալ, բարձր մարգիկ են. նրանց հակադրում են քիչ թէ շատ միակերպ ստորին մարգիկների, բարբարոսների, ամբոխը։ Հին հնդկացիք իրենց ջոկում էին Արեւմտեան Հնդկաստանի ամենաՀին բնակիչներից. Dāsa կամ Dasyu, որ նշանակում է արհամարհուածներ, ստորադրուածներ, չար, նրանց աչքին երևում էին և՛ բարբարոսներ և՛ չար ոգիներ։ Հնդկացիներն իրենց կոչում էին արիա (Արյա, հին պարսկերէն Aīrya), որ նշանակում է յարգուածներ, ազնուատօհմ, տիրապետող, տէր։ Հին իսրայէլացիներն իրենց ընտրուած ժողովուրդ էին կոչում, և մինչև անգամ եթէ այս ընտրութիւնն սկզբում միայն նշանակում էր, թէ Իսրայէլն իւր սեպհական աստուած ՆՀովայից ընտրուած էր միւս ցեղերից տարբերելու, որոնք նոյնպէս ունէին իրենց սեպհական աստուածները, այնուամենայնիւ իսրայէլացիների պատմական առանձնացման և կրած նեղութիւններէ պատճառով այդ կոչումը ժամանակով ինքնաբարձրացման իմաստ ստացաւ։ Այս ինքնաբարձրացումն աւելի սաստիկ երևում է Հելլէնիստերի մէջ, որ աւելի սրտաբաց և աւելի բնական են իրենց կենաց ձգտումների մէջ քան թէ իսրայէլացիները։ Հելլէնիստերն էլ սաստիկ աններողամտութեամբ էին վերաբերւում գէպի օտարերկրացիները, բարբարոսները, քան թէ հռովմէացիները, որ տիրելով այն ժամանակ յայտնի համարեա՞ թուր երկրները, մասամբ աշխարհաքաղաքացի էին դառել։

¹⁾ Էդդ եղբի բնակիչներն իրենց կոչում են սեմեհա = մարգիպն ետներ. Մանգաի (Դադա) Գոլիկները՝ սեմեհաիէ = մարգիկ. Կենեանները՝ Եդդ-Կոն = մարգիկ. Էսիմեանները՝ Եփուիա, յալեպիէ ին-եւ = մարգ. ամեհանները՝ Խասաւ, Ենեուէ, Եմասեպ = մարգ. Այեանները՝ Եպիւս = մարգիկ, Եմեհալանները իրենց կոչում են՝ Եպիկէ = մարգիկ կամ Եպի, Եպիա, Եփէ. որ Եպի-պէ մարգ է նշանակում։ Յալիկները՝ Ելասիլու = մարգիկ և այլն։

Յոյն մատենադաների և հետազոտողների մէջ ամենից առաջ մենք կանգ կ'առնենք Հերոդոտի վրայ (ծն 500 թ. Ք. առաջ), որ մեր առաջ բաց է անում օտար ազգութիւնների մի ամբողջ աշխարհ: Հերոդոտի «Մուսաները», այժմեան աշխարհագրութեան և պատմութեան անկիւնաքիւղէմը, միեւնոյն ժամանակ ցեղագրութեան ամենանշանաւոր աղբիւրներից մին է ներկայանում. նրանք այժմս աւելի և աւելի գնահատուում են: Սակայն չպէտք է մոռանալ, որ Հերոդոտի, ինչպէս նաև ազգագրութեան և ցեղագրութեան գտնական շրջանի բոլոր կարապետները, յիշենք օր. Կտեգիան, Մեգասթէնը, յաճախ ճշմարիտ տեղեկութիւններին խառնում են անհիշեթ առասպելներ միականի, շնագլուխ, անգլուխ ևայլն մարդկանց մասին: Սակայն ինքը Հերոդոտն էլ այս հրաշքներին կասկածանքով է վերաբերում:

Համեմատական ցեղագրութեան մեթոդի շնորհիւ այս հրաշալագատումներն (legende) չեն կարող նոստացնել դրանց ներկայացրած իսկական գտնները: Մի ուրիշ տեղում ¹⁾ մենք առիթ ենք ունեցել խօսելու Հերոդոտի և Ստրաբոնի (ծն. 63 թ. Ք.ր. ա.) գիտական աշխարհագրութեան վերաբերմամբ ունեցած նշանակութեան մասին և ցոյց ենք տուել որ նրանք նախազգացել են այժմեան մեթոդներն և նրանց ոգին. այժմ մեզ համար առանձնապէս այն է նշանաւոր, որ Հերոդոտն ու Ստրաբոնը շատ անգամ ցոյց են տալիս, ի հարկէ, հեղինական հայեցակէտից, մարդու և նրա բնակավայրի միջև եղած կառարելապէս բնական կապը:

Բայց այս վերջին հարցը մարդկութեան ցեղական տարբերութիւններից անհատական մարդու ուսումնասիրութեան կը տանի: Նախնական բանականութեան համար մարդու ուսումնասիրութիւնը նրանումն է կայանում, որ միշտ գտնի չարիքից պաշտպանուելու, զարհուրելի մահից ազատուելու, կեանքը տասնհազար տարի երկարացնելու, այդ էր, գտնէ, հրնդկաց բժիշկների շանքը: Վայրենի մարդու մասին ունեցած

¹⁾ Յ. Ստրա, *Задания научной географии* էջ. 503.

բոլոր տեղեկութիւնները կենդրոնանում են նրա աշխարհա-
կազմային և աստուածաբանական գաղափարների մէջ:

Սակաւ չեն նաև այն զուտ մարգարանական տեղեկու-
թիւնները, որ կարելի է գտնել նորակերթ ազգերի մէջ:
Այսպէս հնդկացիներն ունէին մարգու մարմնի կազմութեան
և նրա բժշկելու մասին որոշ տեղեկութիւններ, իսկ նը-
րանց հոյակապ կրօնական—փիլիսոփայական ստեղծագործու-
թիւնները լի են հրաշալի հոգեբանական մանրամասնու-
թիւններով: Տարակոյս չկայ, որ հնդկացիները մեծ մասնազ-
ներ կը լինէին, եթէ նրանց փիլիսոփայական շէնքերը
գրուած չլինէին բանաստեղծական ոգևորութեան մրրիկների
վրայ: նրանք մեծ բանաստեղծներ կը գտնային, եթէ գեղա-
րուեստական անուրջները չեանրաբեռնուէին խորիմաստ փի-
լիսոփայական յայտնութիւններով:

Հին յոյների մէջ ևս չենք նկատում մարգարանութեան
այժմեան բաժանմունքները: Ալլնտեղ, ուր մենք երկու
խօսք ունինք, կազմախօսութիւն (ANATOMIA) և բնախօսու-
թիւն, նրանք միայն մինն ունին՝ ֆիզիո — բնութիւն:
Այսպիսի միութիւնը լիովին համապատասխանում էր հելլե-
նացիների ամբողջական ոգուն: Մարգու մասին գիտութիւնը
մասերի բաժանելու միտքը մինչև անգամ Արիստոտէլին
յայտնի չէր: Սակայն և այնպէս՝ մի որոշ չափով կարող ենք
խմբերի բաժանել յոյն և յոյն-լատին հետախոյնները, նայե-
լով թէ նրանք աւելի որ ճիշդին վերաբերեալ երկեր են ու-
նեցել: Մարգու բնախօսական կեանքի ամենանշանաւոր հե-
տախոյզ հանգիստնում է divus pater medicinae Հիպպոկրատ
(մատուորապէս 460 կամ 460 մինչև 377 թ. Ք. ա.) ռոգերի,
շրբերի և տեղերի մասին գրքի նշանաւոր հեղինակը: Այս շնո-
կեզրգոյիլը, ինչպէս հաշում է Բլումէնբախը, խօսում է թէ կլի-
ման ինչ ազդեցութիւն ունի մարգու կազմութեան և հոգեկան
յատկութիւնների զարգացման և կառավարութեան կազմա-
կերպութեան վրայ: Հեղինակը գլխաւորապէս ուսումնասի-
րել է եւրոպական և Փոքր Ասիայի յոյներին և Պոնտոսի
Ճովափնեայ բարբարոս սկիւթացիներին: Հիպպոկրատ կարա-

պետ է հանդիսանում այժմեան մարգարան-աշխարհագրներին: Տապինար նրան կոչում է լճիլավայրի մարգու ֆիզիքական, բնախօսական և տխտարանական բնորոշ կետերի կազմակերպութեան վրայ ունեցած ազդեցութեան մասին խօսող գիտութեան հիմնադիրը: Որպէս անգամազննին-բնախօս կարող ենք լինել Պիթագորեան Ալիմէօն Կրանցուն (մօտաւորապէս 520 թ. Ք. ա.), որ հաւանականօրէն առաջինն է անգամահատել մարգը և ուսուցել, թէ ուղեղը հոգու կայանն է: Անագագորին (մօտ 500 թ. Ք. ա.), որ աշխարհի կազմակերպութիւնը հիմնում է լաիտեան գոյութիւն ունեցող նման մասնիկների գուգախառման և լուծման վրայ: Եմպէգոկին (մօտ 480 թ. Ք. ա.), որ ուսուցանում էր, թէ երկրի բոլոր օրգանիզմների (յօրինուածքների) մէջ հետեակցական կապ կայ: Դեմոկրիտին (460 թ. Ք. ա.) հիւլէնական տեսութեան և համեմատական կազմախօսութեան հիմնադրին, և վերջապէս Արիստոտէլին (384—մինչև 322 Ք. ա.), լուծական գարի ամենամեծ փիլիսոփայ—բնագէտին: Թէև Արիստոտէլ իւր ոյժերը նուիրել է զլիաւորապէս կենդանաբանութեան, Ալէքսանդր Մեծի փառաւոր արշաւանքների միջոցին իրեն հասցրած չափից զուրս հարուստ հաւաքածուի պատճառով, թէև նա չէ ուսումնասիրել այդ լալթոյններին ապշեցնող ժողովուրդները, և չէ տարբերել մարդկային ցեղերը ¹⁾, այնուամենայնիւ նրա գրուածները մի օրոշ նշանակութիւնից զուրկ չեն անգամազննութեան և բնախօսութեան պատմութեան համար և ի միջի ալլօց, առիթ են մարգու ճակատի, ունքերի, ալքերի շարժման ևսլլն մասին հետաքրքիր գիմադիտական տեղեկութիւններ: Նախաքրիստոնէական շրջանի ամենավերջին բժիշկ—անգամազնններէից կարելի է, վերջապէս, լինել Հերաֆիլին (300 ա. Ք. ա.), Երաստրիտին (280 ա. Ք. ա.), որ կազմախօսութեան պատմութեան մէջ մեն անուն ունին: Սակայն չպէտք է մոռանալ՝ որ անգամազննութեան և բնախօսութեան ուսումնասիրութիւնը շատ մեծ արգելքների

¹⁾ Bastien Vorgeschichte der Ethnologie. էր. 79.

Հանգիսեց յունաց կրօնական նախապաշարմունքների պատ-
ճառով: Մեռածների հոգիները մինչև թաղումը թափառում
են Սաթբաթ փերին, ուստի և անգամահատութիւնն ար-
գիլում է: Դիակը, մինչև անգամ մարգու պատահմամբ
զանուած մի ոսկրը, պէտք է հոգով ծածկէին, հետևապէս
ձեականօրէն պիտի կատարէին թաղումը¹⁾: Նոյնանման սովո-
րութիւններ կատարում էին և հազմէացիներն, որ արհամար-
հում էին միայն լանցաւորներին և անձնասպաններին: Հռմը
հազարաւոր կեանքեր է զոհել կրկեսի հաճոյքների համար,
բայց գիտական նպատակով գիտկներ զօրծածելը սրբապգծու-
թիւն է համարել: Մինչև անգամ Կ. Գալէնը (181—201
Ք. յետ.), իւր ժամանակի ամենանշանաւոր բժիշկն ու ան-
գամազննիչը և յաջորդող տասն և չորս դարերի եւրոպացի
և արաբ գիտնականների հսկայական հեղինակութիւնն, իւր
խել խոստովանութիւնով ուսումնասիրել է ոսկրաբանութիւնն
անձնասպան և լանցաւոր մարդկանց չթաղուած ոսկրների
վրայ և յառկապէս ուղղւորուել է Ալէքսանդրիա, տեսնե-
լու ախտեղ մարգու ամբողջ կմախքը: Գալէնը իւր ան-
գամազննական տեսութիւնները հիմնում է գլխաւորապէս
կենդանիների մարմնի վրայ, այսպէս օր. յափշտակուելով
մարգու ձեռքի կազմութեամբ, նա նկարագրում է կապկի
ձեռքը, որ զրկուած է զարգացած m. opponens pollicis-ից:
մարգու սաքը նկարագրելիս, նրան նախատիպ ծառայել է
կապկի սաք-ձեռքը:

Հոգեբաններ են հանգիստնում յունական փիլիսոփայու-
թեան ծաղկման շրջանի մեծ փիլիսոփայ-բարոյախօսները:
Յունական փիլիսոփայութեան առաջին շրջանը Թալէսից
մինչև Անախագոր և հիւլէականները, կայանում էր առա-
ւելապէս թանձրացեալ աշխարհն բժրւնելու մէջ, ուստի և
կարող է տիեզերաբանական փոշուիլ: զրա հակառակ
երկրորդ շրջանում բոլոր մտածողութիւնների կեցրոն հան-
գիստնում է մարգը: Այս ւմարգաբանական շրջանի ներկա-
յացուցիչներն էին սփեւսաները, Սահրատէս, նրա զպրօքը,

1) Դի մի լինի Գիգիէի Եղիպտոսի բաւով վերակը:

Պատանը, Արխատտէլը, ստալիկեանները, էպիկուրեանները և սկեպտիկները: Վերջապէս երրորդ շրջանը, նոր-պիւթագորեան գալոսցից մինչև նոր-պղատանական գալոսցը, բնորոշւում է աստուածաբանական հարցերի գերակշռութեամբ. այս շրջանն աստուածաբանական կամ աւելի լաւ՝ առասուածականն (θεосоφическія) է: Հասարակական կեանքի խնդիրներով, մարդկութեան հասարակական կազմակերպութեան հարցով, հետևապէս և՛ ընկերաբանական խնդիրներով զբաղւում են մեծ փիլիսոփայ—իզէալիստ Պատանը, (427 կամ 428—348 կամ 347 Ք. ա.) իւր Թագաւորութիւն, Politeia, Respublica, Timatis տրամախոսութեան և Kritias հասուածի մէջ և մեծ փիլիսոփայ—բէալիստ Արխատտէլն իւր «Բարոյագիտութիւն» և «Քաղաքականութիւն» երկերի մէջ:

Արխատտէլ առաջինը մարդաբան կոչեց մարդկանց ուսումնասիրողներին:

Հին քաղաքակրթութեան ազգերի հաւաքած գիտական նիւթերը շուտով ցիր ու ցան եղան ազգերի մեծ տեղափոխման պատճառով: Այն գաղափարներն, որոնցով յայներն և նրանց յաջորդ հոռոմէացիներն ոգի էին ներշնչւում բնութեան, անխնայաբար ցրիւ արուեստան կամ խեղդուեցան: Աւթերորդ դարի սկզբում Նւրոպայի և Ասիայի միջև բարձրացաւ մահմետական ազգերի զարհուրելի պատը: Արաբներն և յետոյ սելջուկները արեցին ամբողջ յուճեցած Փոքր-Ասիան, Հիւսիսային Աֆրիկան և վերջ է վերջու մինչև անգամ Նւրոպայի միջանի հարուստ գաւառներ: Նւրոպացիները գեռ շատ թոյլ էին Ատլանտեան օվկիանոսի յարուցած արգելքները լաղթելու և օվկիանոսի միւս կողմում գտնուող անտեսանելի աշխարհների հետ հաղորդակցելու համար: Այսպիսով Նւրոպան յետ էր մզուած և մեխուած իւր նեղ սահմանների մէջ: Ծանր ամպերը հեռահեռ պատում էին եւրոպացիների հորիզոնը. այն բոլորն, որ երբեմն համարձակ գիւտերի շնորհիւ յայտնի էր դարձել, մոռացւում էին: Թէև Արաբները պահպանեցին և մինչև անգամ մասամբ շատաց-

րին եւրոպացիների ձեռք բերած տեղեկութիւնները, թէև այս տեղափոխիկ և ձեռներէջ ազգի աշխարհագրութեան և մարդաբանութեան մասուցած ծառայութիւնները շատ մեծ են ¹⁾, սակայն որանց, Արարների տեղեկութիւնները, ինչպէս նաև բուքարայական ուխտաւորների ցուցումները, ինչպէս որ. Հիւան Սանգ նշանաւոր հանապարհարդին, չինացիների հետազոտութիւնների նման, չիշան տաւծ, միայն այժմ են եւրոպացիների ստացուածք գտնուում: Քրիստոնեայ ազգերն առաջին հազարամեակի վերջին բացի Սուրբ Երկրէջ ամբողջ Ասիայի մի ուրիշ երկրի մասին հազիւ թէ տեղեկութիւն ունենային: Բայց ինչքան էլ որ եւրոպական քաղաքակրթութիւնն ամփոփուած լինէր միայն իւր երկրի մէջ, այնուամենայնիւ գազարած չէր: Նա ստուել էր, բայց չէր մեռել: Մարդկային միտքն անգաղար և անհանգիստ աշխատում էր: Ժամանակ առ ժամանակ գուրս էր ցարտում այս ոյժը, որ միջնագործան գազարման շրջանում այնպէս ցաւայի կերպով զսպուած էր. այսպիսի մի ձգտման հետևանք էր, որինակ, ամբողջ գէպի Սուրբ Երկիրն շարժուիլը, Խաչակիր պատերազմները: Մնալով Եւրոպայի հեղձուցիչ և փակուած էմթնայորդում և միանգամայն ձգտելով ազատութեան, այս միտքն ընկզմում էր մետաֆիզիկալի անելանելի յորձանքների մէջ, նա բարձրանում էր բուռն միտքիցի մանահաման բարձրութեան վրայ և կամ երկչոտութեամբ կախում էր գտտական հեղինակութիւններից, այն մարդկանց կարծիքներից, որոնք վարել էին լաւագոյն և աւելի ազատ կեանք:

Միջնագործան միտքը, կարծես, նախազգացմամբ վախնում էր վստահօրէն ընդհանրացումից, նա սիրով խորատուգում էր այս կամ այն հարցի մանրամասն ուսումնասիրութեան մէջ: Բայց մարդու բնական (բէալական) ուսումնասիրութեան հակադրում էին համարեա անյաղթելի խոչընդոտներ: Կասեղգորի տակով է. գարում գերեզմանաաներում պահապաններ էին գնում, որ արգելին կազմախօսա-

¹⁾ Peschel, Geschichte der Erkände էր. 85.

կան նպատակով գիտկներ հանել: Դեռ թ. Գ. զարում Բոնի-
ֆացիուս Ը.-ի կոնգաղը բանագրում էր այն մարդիկը, որ
համարված էին գիտկներ անգամահատել կամ ոսկորներ
հանել: Թ. Գ. զարու նշանաւոր անգամազննին Լուիգովի
Մանգոնի խոստովանում է, թէ ամեղաց համար չէ ուսում-
նասիրել միքանի ոսկորներ: Միջին դարերի ոգու համա-
նայն, որ ամենից առաջ փախւում էր կենսական, բեւալական
և այս պատճառով անհերքելի փաստերից, մարգն ուսում-
նասիրողներն առաւելապէս կանգ էին առնում նրա հոգե-
կան գործունէութեան վրայ: Մարգարանութիւնն աւելի և
աւելի հոգեբանութեան կերպարանք էր ստանում և այն
էլ խորհրդաւոր (միտակական) տիեզերաբանական սկզբունք-
ների վրայ հիմնուած հոգեբանութեան: 1594 թուին Կա-
ման քահանան հրատարակեց «Psychologia Anthropologica, sive
Animachumanae doctrina» խորագրով մարգարանութիւնը:
Հոգեբանութիւնն իւր մեծաթիգիքական բնաւորութիւնը գեռ
մինչև այժմ էլ մասամբ պահել է: Հին Pneumatologia (հո-
գեթոսութիւն) արգի հոգեբանութեան (այս բառը մտել է
ձ. Գ.) մէջ ստուգիւ իւր գոյնը ցոյց է տալիս, երբ հա-
ռում է ոչ միայն մարդկանց, այլ և հրեշտակների հոգեկան
կեանքի մասին. այդ պատճառով էլ նա համարեա միշտ մի-
այն փիլիսոփաներին է վերապահուել:

Մասնազը հասարակական խնդիրներին ձեռնարկելիս,
կարողանում էր միայն լիովին անձնատուր լինել ուսույթա-
կան յայտերի հեղեղատին և կորչիլ Պլատոնի հասարակապե-
տութեան հետևող գծրաղգ Թոմաս Մօրուսի (1480—1535)
պէս և կամ այդ միևնոյն Պլատոնը յարմարացնել տիեզերա-
կան պապական միապետութեան մաքին, պապի գերիշխա-
նութեամբ և ազատուիլ Թովմաս Կամպանելլայի նման
(1568—1639):

Բայց ահա եւրոպական համապարհորդների և արկածա-
խնդիրների համարձակ մեծագործութիւնները յանկարծակի
ընդլայնեցին իրենց ցեղակիցների հորիզոնը: Կարծես մոգա-
կան ուժով շարժուեցան և ընկան միջնագարեան նեղ շրջա-

նակներն և զբա հետ միասին անտանելի դարձան մարդու վրայի նախկին նեղ կանխակալ հայեացքները: Եւրոպացիների առաջ բացուեցան նոր աշխարհներ, որոնց տիրապետութիւնը բոլորովին փոխեց եւրոպական կեանքի ամբողջ ընթացքը և մինչև անգամ կազմակերպութիւնը: Դեռ աշխարհագրական մեծ գիւտերի շրջանից առաջ, որ տեղի ունեցաւ Եւրոպայի մասաւոր արթնութեան ժամանակ, որը և մեծապէս նպաստեց զբան, եւրոպացիները շատ անգամ գուրա էին գալիս իրենց նեղ պատերից: Մենք ՚ի նկատի ունինք առանձին կրօնական առաքելութիւններ և ճանապարհորդութիւններ, ինչպէս Պլան Կարպինու (1245 թ.), Գայտոնների, Վ. Բուքուկի (1253), Օվիգ զը Պարգէնսնէի (1316) և ուրիշներինը: Վերջապէս խաչակիրների սարսափելի զրկանքների և կորուստի, նրանց անգարձ հերոսութեան, նրանց սուրբ տանջանքների և սուրբ ոգևորութեան մէջ հարստանում և պարարտանում էին միջնադարեան մանրագնառները: Նրանք խաչակիրներէ արիւնանիչ հետքով մտնում էին Ասիա: Պիզան, ձեռնուան և Վենետիկը, մանաւանդ երբ վերջինս բարեկամութիւն հաստատեց Նգիպատոսի հետ և Սև Ծովի միջով ճանապարհ բացեց իրեն դէպի Հնդկաստան, իրենց ժամանակի զբոսաւերերը դարձան: Վենետիկի, հարուստ բանակալների այս հասարակապետութեան, Ազրիա թագուհու համարձակ որդիներից մին Ասիայի մեծ հետազոտողի փառքն ձեռք բերեց: Սա էր Մարկո Պոլո (ճանապարհորդեց 1271—1295 թ.), totius orbis et indie perigrator primus, ինչպէս կոչուում է Հոսմի Բագիա պատկերասրահի մէջ գրուած պատկերի մէջ: Բայց այնուամենայնիւ մեծ գիւտերի շրջանի այս և միւս կարապետների ազդեցութիւնն ոչինչ է համեմատելով այն յեղափոխութեան հետ, որ յառաջացրին այս շրջանի ամենաթշուառ և ամենամեծ հերոս՝ ձեռնուացի Քրիստափոր Կոլումբոսը, (1446(?)—1506), փորթուգալացի Վասկո զը Գամա (1469—1524), Մագելլան (1480(?)—1521) և ուրիշներ:

Մեծ գիւտերի փոթորկալից դարաշրջանը չկարողացաւ մարդկութեան մասին պարզ հայեացքներ մշակել ¹⁾: Դան-

¹⁾ Եւ ընկերների սրտային նկարագրութիւնները բաւական միշտ մե-

ները տիրելու համար մզուած անողորմ կռիւներն և բազաւոր տիրողների յափշտակողական բնազդումները ճնշում էին նրանց մարգասիրական զգացմունքները, որ նրանց աւում էր. թէ եւրոպացիներին զոհ դարձող բնիկները նոյնպէս մարդիկ են: Այդ ժամանակի համար 'ի զուր չծագեց Պարացելսի (1493—1541), այս միջնադարեան տիպական մաւծողի, փրկիստփայլութիւնն աստուածաբանութիւնից բաժանողի և աստուածաբանութիւնն ու քիմիան միախառնողի անողորմ վարդապետութիւնը: Պարացելսի մաքով, որ յետոյ Պերէլլոն (1656) զարգացրեց, մարդկութիւնը բաժանուում է ազամեանների, Ազամի սերունդի, հետեւապէս և իսկական մարդկանց, որ մենք, եւրոպացիներս ենք, և նախազամեանների: Ազամից առաջ ստեղծուած էակներ, որոնք Աստծու՝ մարդկանց ստեղծելու անյախօղ փորձն էին, հետեւապէս և՛ ոչ իսկական մարդիկ. ամենայն իրաւամբ կարելի էր նրանցից ոգաուել՝ ինչպէս ընտանի անասուններից և անհրաժեշտ գէղքում մինչև անգամ ջորդել բոլորին: Պապը 1537 թուի Յուլիոսի 3-ի կոնդակով յայտնում է՝ որ հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ՝ Ամերիկայի հնգիկներն իսկական մարդիկ են և միևնոյն ժամանակ հերքում է այն կարծիքը, թէ վայրենիներն սարկական շրջանից պիտի անցնին, որ կարողանան քրիստոնեայ գառնալ: Սակայն այս խօսքերը մեռած առ ոմնացին: Մարդիկ շարունակում էին զարձեւալ անողորմաբար ծառայեցնել և ջորդել թալանուած վայրենիներին:

Սակայն շուտով և բազացիների կատարած յափշտակութեան հետեւանքը զգալի եղաւ իրենց ևրօպացիների վերայ: Ամերիկական ոսկին և ամերիկական արկածները, կամ ուրիշ խօսքով, Ժողովրդական ոգու ուղղութիւնն՝ որ կազմակերպուեց սպանացիների և փորաւզալցիների մէջ շահասիրութեան և միայն յափշտակութեամբ զանձեր տիրելու տենչանքի ազդեցութեամբ, կտարեց այս ազգերի պատերազմական, աւատական ոյժը: Սրանց թուլութիւնը միջոց տուեց աւելի աշխատասէր և վաճառական հոլլանդացիներին և անգլիացիներին բարձրանալու և զօրանալու:

Այդ ժամանակ մի նոր, աւելի գործնական և կենսական ոգի սկսեց փչել մարդու մասին գիտութեան վրայ: Անգղիացիներն եւանդով ընդգրկմադրեցին, որ շնչաբանական (PHYSIOLOGIQUE) հոգեբանութիւնը չգերակշռէ մարդաբանութեան մէջ և համարձակ ու գորեզ Թրէնտս Բէկոնը (1661—1628) անպարման պահանջեց նոր ինքնուրոյն ընթացք և անգաղարում կռուեց դասական հեղինակութիւններին կոյր հետեւողութեան և երկրպագութեան դէմ: Տեղեցիւսին (1608—1688) հետեւելով նա փորձի նշանակութիւնը ցոյց տալու համար իւր նշանաւոր *Novum Organum*-ի մէջ լայանեց որպէս առած այն, իւր ժամանակի համար զոնժ միաբը, թէ «homo, naturae minister et interpres, tantum facit et intelligit, quantum de naturae ordine, re vel mente observaverit; nec amplius scit, aut potest» ¹⁾:

Ուր մուտք էր գործում այդ վարդապետութիւնը՝ այնտեղ անհնարին էր լինում մտքի միջնագարեան փափուածութիւնն և վախճանութիւնը: Մինչդեռ ազատ և ինքնուրոյն փորձի անհրաժեշտութեան գիտակցութիւնն աւելի և աւելի տարածւում էր, Անգլիոյս Վեզալին (1614—1664) լանուն այդ գաղափարների ձգեց Գալէնի հեղինակութիւնը և գարձու կազմախօսութեան բարեկարգիչ, նրա շէտերը, ինչպէս ասում են նրա կաթուղի թշնամիներն: Վեզալին, Փարիզի նըշանաւոր կազմախօս Սիլվիի աշակերտ և յետոյ բաղգաւոր հակառակորդը, շատ և լաջող կերպով աշխատեց կազմախօսական գիտութիւնների մէջ և մինչև անգամ յետ չկեցաւ գերեզմաններ և կախաղաններ թաւանելում, նա շուտով մեծ փառքի հասաւ, Կարոլոս V և Փիլիպպոս II.-ի պալատական բժիշկը գարձու և մինչև անգամ Սալամանկայի աստուածաբան ուսուցչապետներին խոտտովանել տուեց, որ մեզք չէ կազմախօսութեամբ պարապել. բայց և այնպէս՝ նախապաշարմունքների զոհ գնաց: Նրա ձեռագիրները վառեցին, նրան

¹⁾ Fr. Bacon. *Oeuvres philosophiques*. V. II. էր. 3. «Մարքը, ընտրեան ծառայող և ճկնալը, կարող է անգիտադրել և գիտենալ այնչափ, որչափ նա նշմարել է ընտրեան կազմակերպութիւնը փորձի կամ գիտաբանութեան միջոցով. զոնժից աւելի նա ոչինչ չգիտէ և չի կարող»:

ուղարկեցին Նրուսազէմ ապաշխարելու և երբ վերադառնում էր՝ նուազեցութիւնից մեռաւ: Վեզայէն ունեցաւ արժանաւոր և կազմախօսութեան ոչ պակաս նուիրւած աշակերտ իտալացի Պալլոսին (1523—1562): Բայց ամենից նշանաւորն այն է, որ մինչև անգամ նրա Հակառակօրդ և Գալէնի պաշտպան Սուտախիան (1574), որի կազմախօսական ազդեցականեբով սովորում էին գեռ անցեալ դարի կիսում, նոյնպէս ինքնուրոյն Հեռագոսութեան միջոցին գիմեց:

Մարգու մասին գիտութիւնը մի անսովոր յառաջընթաց քալլ արաւ մարգու զանազան մասերի արտաքին ձևի նկարագրութիւնից, գէպի նրանց ներքին կազմակերպութիւնն, և արեան շրջանառութիւնը վերջնականապէս հաստատուեց անգղիացի Գերվէի (1578—1697) և խոշորացոյց գործիներին շնորհով: Հէնց այդ ժամանակից կազմախօսութեան և բնախօսութեան ուսումնասիրութիւնը հաստատ հողի վրայ գրուեց: Զնայելով տգէտ ամբօխի և նրա խաւարածիտ առաջնորդների ընդգրկմագրութեան, չնայելով որ իրենց գիտնականները զարհուրում էին մարգութեան առաջ իրենց պարզած բնութեան գաղտնիքները¹⁾, գրական գիտութիւնը հաւաքում էր իւր շուրջն աւելի և աւելի անձնուէր և գիտնական կուտակեցներ: Փարմաական բնախօսութեան մեծ հիմնագիր և լափից դուրս բազմակողմանի Հեռագնին Ա. Գալլէրին (1708—1777), Կ. Ֆ. Վոլֆին (1735—1794) և որանց նման գիտութեան պարագլուխներ իրրև ներկայացուցիչ ունեցող գիտութիւնը լիովին ապահովուած էր:

Այդ ժամանակի Հոգեբան-փիլիսոփաներն էլ ցոյց տուին ոգու միեւնոյն ինքնուրոյնութիւնը և միեւնոյն ձգտումը գէպի ճիշտ գիտողութիւնը, գէպի անմիջական փորձի կամ խիստ օրէնքների բացատրութիւնը:

Ռընէ Գեկարս (1596—1650), Նգուխների աշակերտը, երբեմն արկածախնդիր, երբեմն մենախեաց, իւր փիլիսո-

¹⁾ Նշանաւոր կազմախօս և մանրագնին Սգամբրամ (1637—1680), որ զօգուած է միջանների հեռագոսութեան գաղտնաւոր, ներութեան հասկում գուսի է իւր մեռագիրները:

փայտեան հայեացքների մէջ միեւնոյն ժամանակ սկեպտիկ (երկբայող) և հաւատացող (գովմատիկ), հետազոտութեան նոր հիմունք գրեց: Սրան, այս քաջ մատիմատիկոսին նախակազապար ծառայում էին մատիմատիկական և բնական-գիտական գիտութիւնների ճիշտ մեթոդները: Հոգու և մարմնի միջի այն տարբերութիւնը, այն երկւորութիւնը (dualisme), որի առաջ խոնարհուեց Գեկարաը, համակրելի և համեստ բացի-օնալիստ Բարուխ Սպինոզայի (1632—1687) վարդապետութեան մէջ զարձաւ համաստուածութիւն, որի հիմունքը նիւթի միութիւնն էր և որ վերջ ի վերջոյ փելիսոփային խիստ մոնիզմին տարաւ: Միւս կողմից Զոն Լոկկ (1632—1704) բոփշիկ, փելիսոփայ-մանկավարժ և պետական պաշտօնեայ, անգլիական զբաղման ժողովրդի հոգու, հոգեբանութեան մէջ պտրում էր այն խիստ օրինաւորութիւնը, որ իւր մեծ հայրենակից Նիւտոնը ներշնչել էր իւր զարին: Նա մերժում է բնածին մտապատկերները և նորածնի հոգին նմանեցնում է մաքուր, գրով լինակուած աղիւսակի: Գիտակցութիւնը վերածում է զգացողական գիտողութեան կամ ցուլացման և ներքին գիտողութեան: մեր ներքին փորձի շնորհիւ մենք ըմբռնում ենք մեր մասնողութիւններն ու ցանկութիւնները:

Այս համարձակ գաղափարները շատ մեծ ազդեցութիւն ունեցան XVIII դարի և մանաւանդ Ֆրանսիական փելիսոփայութեան վրայ: Լոկկի էմպիրիզմի հոգի վրայ կանգնում է, վերջապէս, և վերջին անգղիացի մասնող Դաւիթ Հումը (1711—1766), նոյնպէս գործնական կեանքի մարդ, փելիսոփայ, պատմաբան և պետական պաշտօնեայ, որ տանում է իւր վարդապետութիւնը մինչև Յայրայեզ սկեպտիկականութիւնը:

Սակայն Հումը մի որոշ լափով պատկանում է մեր գիտութեան մի ալլ շրջանի, այն շրջանին, երբ անհատական մարդու հետազոտութեան հետ միասին, որոշ կերպով աւսումնասիրում է և՛ մարդկութիւնը:

Թէ լեշնալ շրջանում որքան թուլ էին մշակուած գի-

տական ներթերն այսպիսի նպատակների համար, երևում է նրանից, որ այս մամանակի ընկերաբանական փորձերն այնուամենայնիւ անհիմն և արուեստական են եղել:

Հոլլանդացի Գրոցիուս (Hug de Groot 1683—1645), միջազգային իրաւունքի հիմնադիրը և նշանաւոր *de jure belli et pacis* ²⁾-ի հեղինակը *a priori* ընդունում է, թէ մարդկային ընկերակցութեան սկիզբն ազատ գաշինքն է եղած: Այս գաշինքին մարդկութիւնը գիմում է իւր բնական ընկերական զգացման շնորհով: Միևնոյն մաքին է և անզգիացի Հորբուսը (1688—1679), այս պետագիմական արմատականը, ինչպէս սուր կերպով կոչում է նրան Տուլլակը: Իսկ ըստ Հորբուսի գաշինքը կապելու շարժառիթն ոչ թէ ազատ համաձայնութիւնն, այլ գառն անհրաժեշտութիւնն է եղել, որ բղխել է մարդու բնական դրութիւնից, *bellum omnium contra omnes*-ից: Մարդը, արիստոտելեան այս քաղաքական կենդանին, մեղուների, մրջուների և ուրիշների պէս առաջնորդւում է միայն ետականութիւնով: Սրանից հետևում է անհատական մարդու ընկերակցութեան ենթարկուելու անհրաժեշտութիւնն. սրանից է որ Հորբուսը խոնարհում է պիտանաւորութիւնն զազափարի ժողով: Հորբուսի հայեացքները տաք վէճ յարուցին, որ սակայն հասարակ արամաբանութիւնից վերև չբարձրացաւ: Հետաքրքիր է, որ մինչև անգամ գրական Լոկկը իւր հասարակապետական տեսութիւնները, որոնցով նա մի որոշ չափով Մոնտեսքիօի և Ռուսսոյի կարապեան է հանդիսանում, հիմնում է միևնոյն ազատ գաշինքի կեղծիքի վրայ, ինչպէս և Գրոցիուս և Հորբուսը:

Ֆ. Ժ. Ռուսսոյի (1712—1772), ինչպէս և իւր կաբապետների ընկերաբանական հայեացքների մէջ նկատւում է փաստական մասի պակասութիւնը: Ռուսսոն, որ իւր և յաջորդ գործի ճանապարհորդների և մարդաբանների վրայ ահագին ազդեցութիւն է ունեցել, նախնական մարդու մասին շատ տեղեկութիւններ չունէր: Նրա «*Contrat Social*»-ը հիմնուած է այն ազատ հասարակական գաշինքի կեղծիքի

²⁾ Առաջին հրատարակութիւնն եղել է Փարիզ 1625 թ.

վրայ, որով ամեղանից իւրաքանչիւրն ենթարկում է իւր անձը և իւր բոլոր ոյժը հասարակական կամքի բարձրագոյն առաջնորդութեան, և որի համաձայն մենք ընդունում ենք ամէն մի անգամին իբրև ամբողջի անբաժան մասնը:

Ռուստոն, հիմնուելով XVII և XVIII դարերի հետազոտողներին տիրող և առաջնորդող այն գաղափարի վրայ, որ ամենից առաջ անհրաժեշտ է որոշել մտածողութեան և հասարակական վիճակի նախնական ձևը, մի շարք աշխատութիւններով ¹⁾ գծում է բնական մարդու տիպը. սա բոլորովին բարի և մաքուր մի էակ է, միայն քաղաքակրթութիւնն ընդունակ է նրան ցեխոտելու: Բարոյականութիւնն ոչ թէ մարդկութեան մտաւոր զարգացման, այլ չփայտած մարդու բնածին խափութիւնն է: Բոլոր մարդիկ բնութեամբ հաւասար են. (Հորբս, Կ. Վոլֆ և ուրիշներ): անհաւասարութիւնը ծագում է միայն մարդկանց կրթութեան անհաւասար միջոցների ազդեցութիւնով: Այս պատճառով Ռուստոն, ամբողջութեան և բնութեան այս մեծ մարզն իւր բոլորքուած համոզմունքի բոլոր ուժով քարոզում է վերագաւնալ բնութեան գիրկը. նա այդ է միայն համարում անբնական քաղաքակրթութեան լծի տակ տանջուող մարդկութեան առողջանալու միակ միջոցը:

Մենք արդէն ցոյց տուինք, որ Ռուստոն մի որոշ չափով գտնւում էր Լոկկի ազդեցութեան տակ: Այս պատճառով չի կարելի չիշել, որ Ֆրանսիացիները՝ ծանօթանալով Անդգլիայի և մանաւանդ նրա գրական փիլիսոփայական գրականութեան հետ, Յրանախայում հոգեկան զարգացման մի յեղաշրջում յառաջացրին: Միև կողմից, քաղաքական յայտնի գէպքերը և այսպէս տասն, Ֆրանսիացիներին յեղափոխութեան համար պատմական պատրաստութիւնը, իրենց մըտածողներին իրենց ցանկացածից էլ անհամեմատ հեռու մըղեցին: Յիշենք, վերջապէս, որ այժմ անխոհեմ Ֆայրայելութիւն, աւելորդ և ոչ մի կերպ չարգարացող համարուած

¹⁾ Discours sur les sciences et les arts. 1749; Discours sur l'origine et les fondemens de l'inégalité parmi les hommes. 1753; La nouvelle Héloïse. 1761, Du contrat social etc. 1762. Emile, ou sur l'éducation 1762.

գործերից շատերը կատարուել են բուռն ոգևորութեան, կը-
ռուի բոցի մէջ, բայց այնուամենայնիւ Հիմնուած են եղել
կատարելագէտ իդէալական զգացման, հասարակական բարիքի
ձգտման վրայ: Ոգևորութեան և համոզմունքի այս ոյժը, որ
գեռ այսօր ազգում է այդ մեն յեղափոխութիւնը պատրաս-
տող մասնադնների գրուածքները կարգացողի վրայ, պէտք է,
'ի հարկէ, անհամեմատ զգայի ազդեցութիւն ունենար իւր
ժամանակակիցների վրայ: Այս գաղափարներով տոգորուած
էին և այն ճանապարհորդները, որ մարգարանութեան մէջ
մի նոր դարագլուխ կազմեցին:

ՊԼՈՒՆ Բ.

Աշխարհագրական մեծ գիտերի երկրորդ զարգացումը.—Պերլ Գերստը.—
 Լերդեր.—Մարգկային ցեղի գաղութացումները և տնտեսական մարդու առաճառ-
 քությունը.—Արևելյ, Բուրբոն, Բյուրնթոն, Կուվե, Օկլե, Ջամբլերնդ.—Գիմպլա-
 ներ և զանգարաններ.—Քլե և Ռեպրու.—Պրիլարդ.—Նորլ Օթաուեր և Ալեքսանդր
 Լուսթրալ.—Արև հաղթանություն և բնախառնական հաղթանություն.—Մարգկային
 ցեղը մեկ թև բազմաթիվ վանդալ ինդիան.—Նախադասական զարգիչ հետադ-
 ասությունը.—Մարգարանական բնկերություններ և լրագրներ.—Մարգարանություն
 արդի գրությունը և նրա ինդիանները:

Աշխարհագրական մեծ գիտերի զարգացում ևս կրկնը-
 ւում է այն շարժումը, որ մենք վերևում իբրև մարդաբա-
 նություն նոր շրջան նկատեցինք և որի մեջ ցույցնում էր
 Ռուսսոյի և նրա համախոհների ոգին: Այդ, առաջին շրջանը,
 ոչ այնքան քնդարձակություն և ոչ այնքան նշանակություն
 է ունեցել, որքան ներշնչում է եղել թալանելու գգացու-
 մից զերծ, և որա համար մարդկություն վայել, ոգով: Մենք
 խոսում ենք ճանապարհորդություն այն նոր ոգևորություն
 ժամին, որ վերածնեց գեպի այգայիսի ձեռնարկություններն
 այնքան երկար ժամանակ տիրող ստանություններից լետու: Աշ-
 խարհագրական այս զարգացման շրջանում (1648—1764)
 միակ միակնարական բացառությունը կազմում են ռուսները,
 կատարելով մեծա հիւսիսային արշաւանքը (1734—1743):
 Նորգէնշէտլը համարում է այս արշաւանքը պատմություն
 մեջ լայնի աշխարհագրական ամենամեծ արշաւանքներից
 մին: զրա հետ են կապուած Միլլերի, Ֆիշերի, Գմե-
 լինայի, Շանլլերի, Կրաշէնինսկոյի և ուրիշների անու-
 ները: Ներուպական և ասիական Ռուսաստանի հետազոտա-
 ներին, որոնք մեծ նշանակություն ունին ժողովրդագրու-

թեան համար, յետագայում միանում են Գեորգի, Պալլաս (1741—1811) և ուրիշներ:

Մեծ ճանապարհորդութիւնների և հետազոտութիւնների զարգացումն սկսւում է Ջեմս Կուկով (1728—1779) որին եռանգուն Գեորգ Պորստէրը համեմատում է նախնի բարերար հերոսների հետ: Նա ճանապարհորդեց (1768—1771) Բանկայի և Սուլանգերի ընկերակցութեամբ Հարաւային Ծովում, ուր նրանից առաջ եղել էին Դամպիէր, Բուգէնդիլ, և ուրիշներ: Այս ճանապարհորդութիւններին յաջորդեցին նրա աւելի նշանաւոր, աշխարհաշրջիկ նաւարկութիւնները, (1772—1776) Պորստէր հայր և որդու ընկերակցութեամբ և (1776—1779) միայնակ: Որպէսզի կարողանանք գնահատել թէ գիտութիւնն որքան պարտական է աշխարհագրական հետաքրքրութեան զարգանալուն և թէ ինչպէս են դասակարգւում մարդկութեան այդ ժամանակի հետազոտողները, բացի յիշուած ուսս ճանապարհորդներից բաւական է յիշել Դամպիէրի, Շարլմայի, Լաֆիտայի, Բրուստի, Կրանցի, Լապլէ-րուայի, Դաբրիցզովի, Ռէյնզուլզ և Գեորգ Պորստէրների, Լիթաւենշտէյնի, Մաւնգո-Պարկի, Բորի Ս. Վենսենի և ուրիշների անունները: Այստեղ տեղի է յիշել և՛ զերմանական ինքնուրոյն փիլիսոփայութեան հիմնադիր Լէյբնիցին (1646—1716), որ շնորհիւ աշխարհիս հզօրների հետ ունեցած կապերի, մեծապէս նպաստել է գիտական արշաւանքների կազմուելուն և մարգարանական նիւթերի ժողովելուն և որ ինքն առաջինն է մարդկութիւնը խմբերի բաժանել լեզուաբանական տեսակէտով:

Այս զարաշրջանի ամենահամակրելի հետազոտողներից մին է վերոյիշեալ Գեորգ Պորստէրը (1754—1794), գերմանացի առաջին ժողովրդական բնապատմաբանը, ինչպէս անուանում է նրան Մօլէշոտը:

Բաստիանի տեւով Պորստէրի երկասիրութիւններով, որ իրենց ճեղք նոյն խի ալժմ զերմանական գրականութեան ամենալաւ զարգեցից մին կարող են համարուիլ, սկսւում է շարմնադասական ժողովրդագրութիւնն ու երկրաբանութիւնը

նպատակ ունեցող գիտական ճանապարհորդութիւնների նոր դարաշրջանը: Յայտնի է թէ Թորստէր ինչ բարերար ազդեցութիւն ունեցաւ Ազէքսանդր Հումբոլդի վրայ: Թորստէրին ենք պարտական, որ մարդասիրական Հայեացք ունինք վարկենիների վրայ, որոնց վերածնութեան և քաղաքակրթութեւնն նա լիովին հաւատում էր: Թէպէտ և այս ժամանակի ազգագրական և ցեղաբանական երկերի մեծ մասը Հրապուրանքներով լի են, թէպէտ բնութեան որդիներին շողորթութեամբ էին մինչև նրանց աստուածացումը, բայց և այնպէս՝ այս շրջանը գիտութեան ահագին նիւթ տուեց, որ նոր ու աւելի լայն հայեացք ձգեց մարդկութեան վրայ:

Այս Հոգի վրայ պատրաստուեց մեր արդէն լիշտ բանաստեղծ փիլիսոփայ Հերզերի (1744—1803) սաստիկ հետաքրքիր, տաղանդաւոր և սուրբ մարդասիրութեամբ համակուած երկը. «Ideen zur Philosophie der Geschichte der Menschheit»¹⁾: Այս աշխատութիւնն իւր ժամանակին չգնահատուեց, առաւելագէտ այն պատճառով, որ նա յարգելով այն ժամանակուայ այնքան հեղինակաւոր փիլիսոփայ Կանտին, ենթադրուեց թշնամական գրախոսութեան, բայց գրափոխարէն այժմ, այս գրքի հարիւրամեայ յօդուանի աւթով, չափից դուրս գովեցին նրան Բաստիանը, Բաացէլը և ուրիշները:

Հերզեր ստեղծելով մարդկութեան պատմութեան փիլիսոփայութիւնը, փորձեց գնել այն բնագիտական, աշխարհագրական Հոգի վրայ և սկսել այն ժողովրդներից, որոնք այժմ կարող են մեզ մարդկութեան մանկութեան մասին դադափար տալ: Նա այս երկու կէտումն էլ Հերզեր մեծ ազդեցութիւն ունեցաւ իւր յաջորդ Հետախույզների, ինչպէս նաեւ, ի միջի ալլոց, արդի գիտական աշխարհագրութեան մեծ ըստեղծող Կարլ Ռիտտերի վերայ:

Գիտերի ժամանակ հաւաքուած նիւթերը Հնարաւոր և նայն իսկ անհրաժեշտ կացուցին մարդկային սեռի դասաւորութիւնը: Տեսակների բաժանելու գաղափարը պատկանում է Ջոն Բէյնին (ծն. 1628). իսկ շվեդացի Կարլ Լին-

¹⁾ Առաջին ազգայնութիւնն եղել է 1784—91 թ. Ռիպայում

նէլ (1707—1778), անտարակոյս ամենամեծ բնագաղտմաբաններէց մին, հաստատել է բնական-գիտական բառագիտութիւնը (terminologie) և մուծել կրկնակ անուանակոչութիւնը:

Մեր գարը, որ խորատուզուած է մանրագիտական և բնախօսական հետազոտութիւնների մէջ և գասակարգական հետաքրքրութիւն չունի, ընտելանում է արհամարհանքով նայելու այս մեծ հետազննի և աշխատաւորի վրայ, որպէս հեռու անցեալի ներկայացուցչի կամ նեղ գոկմտակի (վարդապետական): Սակայն հարկաւոր է մօտ ծանօթանալ Լիննէյի գաղափարների ոգու և յառաջացման պատմութեան, հարկաւոր է լայն հայեացք ունենալ արդի բնագիտութեան խնդիրների վրայ: Անտարակոյս կենդանաբանութեան պատմութեան հմուտ Կարուսն իրաւունք ունի ասելու, որ Լիննէյը չափազանց մեծ և այն էլ ոչ միայն պատմական, այլև ժամանակակից նշանակութիւն ունի զօրծարանաւոր բնութեան մասին խօսող գիտութեան համար և հաջիւ թէ մի ուրիշը գերազանցէ նրան այս կէտում: Լիննէյի ուղղահայաց գոկմտակն լինելու մասին կարծիքը բոլորովին հերքւում է նրանով, որ ինքը զօրծարանաւոր էակների իւր գասաւորութիւնն արուեստական է համարում: Սա որպէս միջոց, շարժանքան թելը է ծառայում գիտողի համար ¹⁾: Լիննէյը տարբերում է սխեմներ (չրութիւնը) եղանակից (methode). նա խօսում է բնական եղանակների (methode) մասին, հակադրելով նրանց արուեստական սխեմները: Յեղը և գաւը կարող են լինել և՛ բնութեան և՛ արուեստի ստեղծագործութիւն: Այն հռչակաւոր վարդապետութեան կողքին, որ ուսուցանում է թէ ամիայն այնքան տարբեր տեսակներ գոյութիւն ունին, որքան տարբեր մեք ստեղծել է սկզբում Անտահման էութիւնը ²⁾ հանգիպում ենք այն ուսուցման, թէ բնութիւնն ուսումներ չի անում: Յիշենք, որ այս միտքը

¹⁾ Caroli Linnaei, philosophia botanica § 156: „Plum aridum Botanice est Systema, sine quo Chaos est Res herbaria“.

²⁾ C. Linnaei, 1, c. § 157 „Species tot sunt, quot diversas formas ab initio produxit infinitum Ens“.

յետոյ շվեյցարացի Բեննետն (1720—1793) է մշակել, Յայտնի գաղվեհամոյ Հեկկէլը շատ մեծ նշանակութիւն է տալիս որ Լիննէյը նոր տեսակների յառաջացման աղբիւր խառնանութիւնն է նկատում ¹⁾։

Լիննէյ, ինչպէս յետոյ կը տեսնենք, որոշեց մարդու միւս գործարանաւոր էակների մէջ բռնած տեղը և այսպիսով հաստատեց գիտական-փորձնական տեսակէտ մարդու վերայ. բացի դրանից, նա մի ծագում ունեցող մարդկութիւնը բաժանեց ցեղերի, Հնարելով գոսաւորութեան, մեր կարծիքով, միակ ճիշտ եղանակը, այսինքն՝ գոսաւորել ոչ թէ միայն մի, քիչ թէ շատ անհաւաստի յատկանիշի, այլ բոլոր կազմախօսական, բնախօսական-հոգեբանական և կենցաղաբանական յատկանիշների համեմատ։ Այս պատճառով Լիննէյին մենք համարում ենք ոչ միայն արդի կենդանաբանութեան և բուսաբանութեան, այլ և մարդաբանութեան հայր²⁾։

Լիննէյի մարդաբանութեան մասուցած ծառայութիւններից յիշենք նաև այն, որ նա բազմաթիւ գիտական արշաւանքների նախաձեռնող եղաւ և վերջապէս հարստացրեց աշխարհագրական և մարդաբանական գրականութիւնն իւր հայրենիքի Հիւսիսում կատարած ճանապարհորդութիւններով։

Լիննէյի աշխատութիւնների շարունակող և միևնույն ժամանակ նրան հակառակորդ հանգիստացաւ տաղանդաւոր գիտնական և վայելուչ սճաբան Ֆրանսիացի Բիւֆֆոնը (1707—1788), որ սկզբունքով, թէպէտև ոչ գործնականապէս, ընդդէմ էր բոլոր գոսակարգութեան։ Թէև Բիւֆֆոնի օրգանիզմի (յօրինուած) մասին ունեցած գաղափարները շատ քիչ հիմնական են, բայց և այնպէս՝ նշանաւոր է նկատել, որ Բիւֆֆոն հակում էր այն մաքին թէ՛

¹⁾ E. Haeckel. Natürliche Schöpfungsgeschichte. Berlin, Reimer. 1876. 7. Aufl., S. 41.

²⁾ Ոչազգուծեալ արժանի է, որ ամեն գիտութիւն սկսոյր է ստանում հեղինակի ազգութեան համեմատ։ Եւպլէս՝ ըստ Գր. Միլլերի մարդաբանութեան հայրը գերմանացի Բյուվերստիւն է (Müller Allg. Ethnographie etc. 8. 2). Իսկ ըստ Նոպիւսի, ի հարկէ, Ֆրանսիացի Բիւֆֆոն (Topinard, Anthropologie générale etc. 33)։ Նորեւում ենք, որ մեկ տասնէ չիմանք լինչ առկ այս պայմանական տիպաբան Լիննէյին։

օրգանները միջավայրի ազդեցութեան ներքոյ կարող են փոփոխուիլ և կերպարանափոխուիլ: Բիւֆֆոնի կարծիքով մարդը շերկնքի ստեղծագործութիւնն է, մինչդեռ կենդանին շերկրի ստեղծագործութիւնն է. մարդը խոսիւ ջոկոււմ է կենդանիների միջից, թէպէտև կապիկի և նեղրի միջի անջրպետը մեն չէ:

Թէև ոչ փաստական, բայց պատմական տեսակէտից շատ թանգազին են Բիւֆֆոնի մարդու՝ աշխարհագրական տարրերի, նրա օրոշմամբ, կլիմայի, ուսեստի և բարքերի ազդեցութեան տակ կրած փոփոխութիւնների մասին ցուցումները:

Բնական-գիտական Հոգի վրայ մինք միւսի լեռնից արագութեամբ լաւաքայան մարդաբանական աշխատութիւններ: Ի. Ֆ. Պ. Բլիւմէնբախ (1752—1840) անտարակոյս գարագիւտի կազմեց իւր «De generis humani varietate nativa», 1775 և «Decades craniorum diversarum gentium» 1790—1820, 1828: Բլիւմէնբախի շնորհիւ՝ մարդաբանական ցեղական գասակարգութեան մէջ սկսեցին գերազանցել արտաքին յատկանիշները, սակայն Բլիւմէնբախ՝ մշակելով իւր սիւստեմները՝ հասաւ գանգեր լափելուն և որանով մարդաբանութեան մէջ դրական մեթոդներ մտցնելու նախաձեռնող Հանդիսացաւ: Բլիւմէնբախի շնորհիւ մարդը դարձեալ ստացաւ իւր տեղը բնութեան էակների մէջ, կազմելով կաթնասունների գասակարգը, *inordinis*—անգէն:

Այս գարաշրջանի ուրիշ շատ Հետազոտողների շարքում լիշենք Կիւվիէին, (1769—1832), Հեդլենակաւոր և բռնակալ, բայց անտարակուսելի մեն-ազանգաւոր Հետախուզին, որ երկար ժամանակ յամրացրեց գիտութիւնն, ուսուցանելով թէ տեսակներն անփոփոխելի են: Հանճարաւոր Օկէնին (1779—1851), որ իւր իմաստասլից «Naturphilosophie» գրքում կապեց մարդուն ամբողջ բնութեան հետ: Որոմերինգին (1755—1830), Գէորգ Յորստերի բազմամեայ բարեկամին, որ գովաբանուեցաւ իւր կազմած նեղրների կազմախօսութեան համար: Յիշենք նաև գանիացի տաղանգաւոր նկարիչ Պետրոս Կամպէրին, որ մարդաբանների ուշադրութիւնը

գարձրեց այսպէս անուանուած Վերսի անկիւնն և Կոնքի կազմութեան ցեղական տարբերութեան վրայ: Սրամիտ Լաֆատէրը փորձեց գիտութեան կարգը բարձրացնել այն գիմագիտական տպաւորութիւնները, որ քիչ թէ շատ կրում է մեղանից իւրաքանչիւրը. բայց նրա գիւտերը ինչպէս և՛ գանգաբանութեան Հիմնագիր Գալլի (1758—1828) գանգի կազմութեան վրայ Հիմնուած մտաւորական ուժերի գիմախօսութիւնն ստեղծելու փորձերը շատ քիչ ենթարկուեցան նիշտ գիտութեան:

Գանգի ուսումնասիրութիւնն աւելի խելացի և գիտական ուղղութիւն ստացաւ նշանաւոր սաղմախօս Կ. Է. Մանֆէրուի շնորհիւ: Իսկ շփեցացի կազմախօս Ռէացիուսը (1796—1860) մշակեց գանգի ուսումնասիրութեան գլխաւոր մեւերը և որոշեց (1842 և յետոյ) գանգերի Հիմնական տիպերը. երկարազուխ (գոլիկոցեֆալ), լայնազուխ (բրակիցեֆալ) և սրանո՞վ բացեց անգիրը, թէև մինչև այժմ քիչ թէ շատ անարգիւնք, լափական աշխատանքներ:

1813 թուին երևեց անգղիացի Պրիչարդի (1786—1848) նշանաւոր երկը՝ «Մարգու բնական պատմութիւնը», գիտական-բնական տեսակէտից առաջին ընդհանուր Հայեացքը ցեղերի վրայ: Այս աշխատութիւնը նախատիպ Ծառայեց նոյն ուղղութեան շատ գրութիւնների: Կարլ Րիտտէր (1779—1859), Վերկրագիտութեան Հիմնագիրը, որ իւր Հետազոտութիւնների նշանաբան ընդունել էր այն միտքը, թէ Վերկիրն ազգում է բնակիչների, բնակիչներն երկրի վրայ, աշխատել է պարզելու այն օրէնքները, որոնց ազդեցութեան տակ մարդկութիւնն ապրում և զարգանում է: Ռիտտէր մարդկութեան վիճակը կախուած է գտնում Հողի կազմութիւնից և նրա լատկութիւններից, սոսքումից և բուսականութիւնից: Նա ուսուցանում է, թէ բնութեան ազդեցութիւնն այնքան թուլանում է, որքան մարդն առաջ է գնում քաղաքակրթութեան մէջ: Նոյնպէս շատ նշանաւոր է նրա ցուցումը թէ բնութիւնն անհամեմատ ուժգնութեամբ ազգում է ամբոխի քան թէ անհատի վրայ: «Այստեղ, այսպէս ասած, ամ-

բոխն ազգում է ամբոխի վրայ և ազգի անհատականութիւնը քնշում է անհատի անհատականութիւնը: Մեր գիտութիւնը շատ պարտական է նաև մեծ Աղէքսանդր Հումբոլտին (1769—1859), մեր դարի համաշխարհային և ամենամեծ բնապատմաբաններից միին: Բաստիան մատնացոյց է անում, թէ ինչպէս մարգիութիւնը միշտ և ամէն տեղ իւր վրայ է գրաւել Հումբոլտի ուշագրութիւնը: Նա Հումբոլտին անուանում է ոչ միայն բազազական եղանակի հնարիչ, այլ նաև նրան է վերագրում ցեղագրութեան կանոնաւորութիւնը և նրա պատմութեան փիլիսոփայութեան համար ունեցած նշանակութեան բացատրութիւնը:

Մարգու մասին գիտութիւնը, ինչպէս տեսանք, հետըհետ՝ ձեռք բերեց աւելի և աւելի հաստատուն բնական—գիտական հիմունք: ստիպն հին փիլիսոփայական գաղափարներէ իւր սիրելի շնչաբանական—հոգեբանական մարգարանութիւնը: Հռչակաւոր կէսնիկաբերկեան մասնադ Կանտի (1724—1804) շնչաբանական մարգարանութիւնը իսկապէս ոչ այլ ինչ է ներկայացնում, բայց եթէ միքանի ազգութիւնների շատ տարրական հոգեբանութիւնն ու բնաւորութիւնն՝ բաւական վերիվերոյ նկարագրութեան հետ միացած ¹⁾: Յիշենք, վերջապէս, որ գեա. 1853 թուին Շմիտը գրում էր Վնոր Կատկարանի մարգարանութեան կամ Քրիստոսի մասին, իսկ 1856 թուին Էմմանուէլ Հերմանն Ֆիխտէն հրատարակեց Մարգարանութիւն խորագրով, երեք ապագրութեան արժանացող, հոգեբանութիւնը:

Բայց այլ ևս անհնարին էր նահանջել: Փիլիսոփայութեան սոսկալի ինքնապատուութիւնը, որի նախաձեռնողներն իրենք փիլիսոփաներն, Հեգելի ամենաձախակողմեան գաղափարներկայացուցիչներն էին, վերջին նեցուկից զրկեց ամբիջն դարերից խոսող փիլիսոփաներին:

Լուգովիկ Ֆոյէրբախ (1804—1872), հաւատի եռանդուն

¹⁾ Դեռ յիշեք, որ Կանտ անգղիացիներին որոշ բնաւորութիւնից զուրկ է համարում, երանց կղզին ամենին մտելի է խառն բնակչութեան պատճառով: Անգղիացիներն բնաւորութիւն չունին, երանց միայն մեղեքում են թէ անին Մեծ Դաւում մէջ է գ. ապագրութիւնից, Lpz, 1823, Hragb. von. Herbart, S. 294.

քարոզիչը ¹⁾ միացրեց փիլիսոփայութիւնը մարգարանութեան հետ: Վնոր փիլիսոփայութիւնը, բացականչում է նա, միացնում է մարդուն բնութեան, ինչպէս և մարդու սկզբունքները միակ, համաշխարհական և բարձր առարկայ փիլիսոփայութեան հետ, հետեւապէս և մարգարանութիւնը բնախօսութեան հետ ի միասին գտնում է համաշխարհային գիտութիւնը:

Կարծէք մարդու հոգեկան կեանքը գտնում է բնապատմաբանների ուսումնասիրութեան առարկայ: Վիճախօսութեան բարեկարգիչ՝ Յովհաննէս Միլլէրը (1801—1868) իւր բնախօսութիւններից (dissertation) մինի բնաբան գրեց հետեւեալը. *Psychologus nemo nisi physiologus*, (հոգեբան միայն բնախօսը կարող է լինել): Բնական գիտութիւնների հազին յաւաքագիմութիւնն, անսովոր արագութեամբ միմեանց յաջորդող գիւտերն իրականացրին, ըստ երևութին, ամենահամարձակ յոյսերը: Սակայն, ժամանակի ընթացքում հարկ եղաւ թողնել նիւթապաշտական չըջնում վերցրած գաղափարներից շատերը, ժամանակակից գանգաբանութիւնն էլ շատ սխալ կէտեր ունի: Բայց հազիւ թէ կարելի է ենթադրել, որ հոգեբանութիւնն երբեքից է լեւ մզուի այն բնական—գիտական հոգից, որի վրայ նա այժմ կանգնած է ²⁾:

Ինչքան էլ փալլուն և գրաւիչ լինէր. կազմախօսութեան և բնախօսութեան ապագայ պատմութիւնը, այնուամենայնիւ մենք այստեղ մի կողմ ենք թողնելու նրանց, որ այժմ ոչ միայն կատարելապէս առանձնացել և զարգացել են, այլ և այս զարգացումով մարդն ու մարդկութիւնն ուսումնասիրելու բերրի հող են պատրաստել:

Սակայն մարդու ուսումնասիրութեան գործին նպաստող ուրիշ ոյժեր ևս գոյութիւն են՝ ունեցել: Մարդկութիւնը մի, թէ միքանի, իրենց ծագումով տարբեր, ցեղերից

¹⁾ Վեստմեն էր իմ առջին միտքը, բնականութիւնը՝ երկրորդը, մտքը երրորդ և փրկիչը, ասում է Փոլերտից: Մրան լիպին կը յարձարայ Երեւոյ Թագի գիւղերի նկատաւորիւնը, թէ գերմանացիներն ամէն ինչ և նախ իսկ անասունութիւնը կրնն են վերածում:

²⁾ Մինչ ի նկատի ունինք այն հոգեբանութիւնն, որ կանգնած է գեւէ Վանդի բնախօսական հոգեբանութեան հողի վրայ. (W. Wundt, Physiologische Psychologie, Lips. Engelmann 2 Aufl. 1880.

բազկացած լինելու խնդիրը նորից անուսմոր և միանգամայն զործնական կենսական նշանակութիւն է ստացել: Մենք արգէն լիշեցինք, որ երբ եւրոպացիներն առաջին անգամ իրենց տէր զգացին անխիւ օտար երկրներէ և ժողովրդներէ, և երբ այս նոր գիտերին կարծես վերջ չէր նախատեսուում, շատ բնական կերպով ծագեց այն միտքը, թէ օտար ցեղերն նոյն իսկ իրենց ծագումով օտար են եւրոպացիներին: Այս գաղափարը, ըստ երևութին, արգարացնում էր այն ժամանակուայ եւրոպացիների անմարգափայել վարմունքը:

Պարացելսի և Պէրէլլի գաղափարները, ճիշտն առանձն երբէք չմտացուեցան ոչ զործնական կեանքում և ոչ գիտութեան մէջ: Այս գաղափարների պաշտպան Հանդիստնում են Ռէյ, Վերէ, Բարիւ-Սան-Վենսն, Դըմիւլէն, Ռուզովֆներ և ուրիշներ: Բայց ամերիկացիների մէջ և սարկատէրերի գերեքարձներէ գէմ մզած պատերազմի ընթացքում այս վարդապետութիւնն սկսուեց խափա գործադրուել և կատարելապէս մշակուեց: Այս վարդապետութեան գլխաւոր ներկայացուցիչներ պէտք է համարել Նատայն և Դլիգգոնին, որոնք աշխատել են նշանաւոր զանգարան Մորտոնի ազդեցութեան ներքոյ: Ամերիկական զործնականութիւնն ու եռանդը մարդկային ցեղը միասեռ թէ բազմասեռ լինելու խնդիրը սաստիկ սուր կերպով գրեց: Նեղրները մարդ չէին համարուում: 200 զօյլար տուգանքի երկիւզով արգելուած էր նրանց զրազիտութիւն սովորեցնել: Նրանց զրկել էին մինչև անգամ քրիստոնէական տաճարներ յաճախելու իրաւունքից: Բայց հիանալի է, որ այդպիսի ծալրայեղութիւններն ոչ միայն մարդասէր իդէալիստների, այլ և բոլոր ողջամիտ մարդկանց բողոքելու առիթ էին տալիս: Այս ծալրայեղութիւնները պատճառ գարձան հիւսիսային և հարաւային նահանգների միմեանց գէմ մզած պատերազմին և անդրատւանտեան մեծ հասարակապետութեան վերջնական վերափոխման: Սակայն մարդկային ցեղերի անհաւաստութեան գաղափարը պատերազմից լետոյ էլ տեւեց: Այդ իւր պատասխանն գտաւ ինչպէս գարվինականութեան հակառակորդ-

ներից (Ագաստիս), այնպէս և՛ եռանդուն զարգինամունքներից, որոնք այսպէս անուանուած նախնական ժողովրդների մէջ պարուժ էին մարդուց գէպի կենդանին անցնող ոգակներու (Կարլ Յոխս)։

Օսկայն միւս կողից, ո՛չ գիտութեան մէջ և ո՛չ գործնական կեանքում չէր մարում մարդկային ցեղն եզակի լինելու զազափարը, որ արդէն քրիստոնէութեան մէջ լուսնեակերպուած է և գիտնականորէն հաստատել են Լիննէյ, Կիւվիե, Բլումենբախ, Պրիլարգ, Յով. Միւլլեր, Ալեքսանդր Հումբոլդ, Լամարկ, Դարվին և շատ ուրիշներ։ Այժմ մարդկային սեռի եզականութեան վարդապետութիւնը Քարթրֆոտի, Բէրի, Վերիտի, Կալմանի, Ռանկէի և ուրիշների աշխատութիւններէ շնորհիւ կարելի է գիտութեան մէջ բուրոյղին հաստատուած համարել։

Վերջապէս մարդու ծագման, նրա աշխարհիւ մէջ բռնած գիւղի և վախճանական խնդիրների հարցը մի առանձին ուշադրութիւն գրաւեց շնորհիւ ներկայ գրում ծագած մի նոր, մարդու նախապատմական զարերի մասին խոսող գիտութեան — մարդու հնէաբանութեան (Paleontologie humaine), ինչպէս սրամտորէն անուանել է Սէրրը։ Այս գիտութեամբ չպարապողների համար շատ քիչ գրաւիչ են մարդու երկրի վրայ թողած առաջին հետքերը — այս կէս փառած ոսկորները, քիչ թէ շատ ոգորմելի քարէ, եղջիւրէ, փայտէ կամ մետաղէ գործիները և զէնքերը, շարգուած, կաւեղէն ամաններն և այլն։ Բայց այս շնչին մնացորդները զարմանալի կեանք են առնում, երբ լուսաւորում են գիտութեան լուսով։ Նրանք գումարում, յարակցում և կազմում են տարօրինակ պատկերներ, որոնց մէջ մենք նկատում ենք մարդկային սեռի և նրա քաղաքակրթութեան սաղմը։ Դիւ-Բուա-Ռէյման իղուր չէ ասում, որ մարդու նախապատմական պատմութիւնն այժմեանից աւելի հրապուրիչ է։

Առաջին անգամ գիտնականների ուշադրութիւնը գէպի նախապատմական ուսումնասիրութիւնները գրաւեցին Բուշէ գլ Պերտի Ամիէնի մօտ Սամադիաի հոգնում և Արեւիկի

1838 թուին գտած բաները: Այս իրերը միմիայն 1863 թուին ճանաչուեցան որպէս նախապատմական մարզու թուրքահայեր և այս բացատրեց նրանց ոչ միայն զր. Եմերլինի Բելգիայում 1829 թուին և յետոյ, և Բուշե-զը Պերտի ուրիշ կարապետների գտած իրերի նշանակութիւնը, այլև առիթ եղաւ նախապատմական Հետազոտութիւնների և մի անգամ շարք նոր աշխատութիւնների: Այս յեղափոխութեան շնորհիւ բացուեցան (1853—1864) Եփէլցարիայում ցցերի վրայ շինուած շինութիւններ (lacustre), որ բաց արին մեր առաջ մի նոր, սաստիկ Հետաքրքիր և նախապատմական կեանքն բոլոր գտնուած իրերից աւելի լաւ լուստարանող, մի աշխարհ:

Նախապատմական իրերից այնքան բացատրութիւններ էին սպասում, որ գիտնականներն անսպասելի ոգևորութեամբ թափուեցան նախապատմական գիտութեան վրայ, կարծես այդ կազմում լինէր ամբողջ մարդաբանութիւնը: Գիտնականներն ոգևորուած, կարծես, մտաքել էին, որ մեր անցեալը ծանկող քողը միայն նոր է սկսում բացուել, որ նախապատմական տեսակէտից գեաւ մինչև անգամ Նւրպան էլ ստամոքսախրատ չէ, գեաւ լիտսենք միւս մալր ցամաքների մասին, որոնք Նւրպայից աւելի արժանի էին մարդկութեան նախափայր Համարուելու փառքին:

Ըստ երևութին, այս նոր գտնուած նախապատմական գիտութիւնը, մեծ բնապատմարան Զարս Դարվինի (1829—1883), այս ռոբոթարանաւոր աշխարհի Կոպերնիկոսի Համարձակ մաքերի և նրա աշակերտների աւելի Համարձակ գիտերի Հեա միասին պարզեցին բոլոր մարդաբանական առեղծուածները: Վաւուեցաւ թէ մարդը մրտեղից է գալիս և ուր է գնում (Բիւլենէր), ուրն է նրա ճիւղազրութիւնը, մրտեղ են նրան կենդանիների աշխարհին անմիջապէս մօտեցնող օղակները, քնն ճանապարհներով ցրուեց նա աշխարհիս վրայ, գուրս գալով իւր, այժմ կորսուած նախափայրից, Լեմուրիայից (Կ. Պօթա. Է. Հեկկել):

Բայց այս Ժայռայնդ ոգևորութիւնն անցաւ լայտնի

Հիասթափումը թողլ շտուկն իրեն սպասելու: Սյո սառնասրտութեան արդիւնքն այն եղաւ, որ ըմբռնեցին այն միաքը, թէ այս ծանր հարցերը վճռելուց առաջ դեռ անհրաժեշտ է կարելւոյն լափ շատ հաւաքել մարգարանական բազմակողմանի նիւթեր:

Այս նիւթերի հաւաքելու և ուսումնասիրելու յաջողութիւնն ապահովուած է նրանով, որ արդէն այս գիտութիւնը լիովին հետաքրքիր է դարձել: Մարգարանութիւնը լափից դուրս մեծ նշանակութիւն ունեցող գիտութիւն է համարւում. նա ունի իւր համալսարանական ներկայացուցիչները, իւր մի շարք գործունեայ օրգանները, որ հարստացնում են նրա դանձարանները:

Եղգարսի և Տիէրի նախաձեռնութեան շնորհիւ Պրանսիայում Հիմնուեց մարգարանական մի գործունեայ ընկերութիւն: Եղգարսի Տիէրուն ուղղած նամակը, որի նպատակն էր պարզել մարդու մասին գիտութեան խնդիրներն ու ծաւալը, միախմբել այս գիտութեան բոլոր ճիւղերն ու ցոյց տալ «մարդու պատմութեան ընտելութեան միացումը»¹⁾, 1830 թուին բացուած «Société d'Anthropologie» ընկերութեան Հիմնաքարն է համարւում: Այս ընկերութիւնը, որի առաջին ներկայացուցիչներն էին Եղգարս, Դ'Ավէզակ, Լընորման, փոխարինեց արդէն լուծուած «Société des observateurs de l'homme»²⁾-ին: Նա իւր խնդիրներից մին գրեց Հաւաքածայք կազմել և նախապատրաստել ճանապարհորդ-Հետազոտողներ: Անգղիայում, «Society for the protection of the aborigenes»-ից, որ անգոր հանգիստացաւ գերետիրութեան նախադաշարում: Ներքէ կաւում, ³⁾ ստեղծուեց 1842 թուին նշանաւոր «Anthropological institute»: Միևնույն թուին Հիմնուեց «American Ethnological Society»: 1859 թուին Բրոկայի նախաձեռնութեամբ «Société d'Anthropologie de Paris»: 1861 թուին Լոնդոնի «Ethnological Society», 1870 թուին «Deutsche Gesellschaft

¹⁾ Bastian l. c. 8. 17.

²⁾ Կիմուսի է 1830 թուին:

³⁾ Բեկտանի նախաձեռնութեամբ. 1838 թուին:

fur Anthropologie» և «Wiener Anthropologische Gesellschaft» և ուրիշներ:

Մեր գիտութեան յառաջագիժութեան նշան են և մարգարանական համաժողովները, որոնցից առաջինը կազմուեց 1861 թուին Գոտտինգենում, Բէրլի առաջարկով: Այս համաժողովին հետևեցին ուրիշներ, որ աւելի միջազգային էին. այսպէս՝ 1866 թուին Նիւշտաէլում, 1867 թ. Փարիզում, 1868 թ. Նորվիքում, իսկ յետոյ Կոպէնհագենում, Բուէնում, Բրիստէլում, Ստոկհոլմում և ուրիշ տեղեր:

Վերջապէս նկատենք, որ մեր գիտութիւնն այժմ ունի մի ահագին շարք ամենագեղեցիկ զբաղման օրգաններ, ինչպէս՝ «Journal of the anthropological Institute», «Archiv fur Anthropologie», «Zeitschrift fur Ethnologie», «Zeitschrift fur Völkerpsychologie», «Mittheilungen der Wiener Anthropologischen Gesellschaft», «Internationales Archiv für Ethnographie», «Bulletins et mémoires de la Société d'Anthropologie de Paris», «Journal d'Ethnographie», «Revue d'Anthropologie»:

Շատ թանգագին նուէր տուին Բերլինի, Վիեննայի, Դրբըզէնի, Վաշինկտոնի և ուրիշ տեղերի մարգարանական թանգարանների հրատարակութիւնները: Երկենք նաև շատ թանգագին «Записки по Отдѣленію Этнографіи Императорскаго Русскаго Географическаго Общества» և «Извѣстія Императорскаго Общества Любителей Естествознанія, Антропологіи и Этнографіи въ Москвѣ»:¹⁾

Մարդկութեան շուտափոխ ուսումնասիրութեան ամենանշանաւոր քաղերից մին և միանգամայն մեր գիտութեան այժմեան ձգտման արդիւնք հանդիսանում են մարգարանական թանգարանները: Այս մեծ գործին սկիզբ տուեց նապոլի նշանաւոր էանապարհորդ Յոն Զինսլիքը, իւր «Lettre sur utilité des Musées Ethnographiques» (1848) բաց նամակով, ուղղուած Ժամարին, որ այնքան շատ աշխատել էր Փարիզում ազգագրական թանգարան հիմնելու: Նաև շատ նշա-

¹⁾ Ոչպէս նաև նշի ընկերութեան հրատարակած «Ethnographisches obozrenie»:

նաւոր է ժամաքի պատասխանի այն մասը, ուր ասում է թէ գուցէ այլ ևս շատ ժամանակ չէ մնում հաւաքելու անցեալի մնացորդները, որ ցիրուցան են լինում և անգտանելի կերպով կորչում:

Այդ ժամանակից սկսած Հիմնուեցան շատ թանգարաններ, որոնք մեծ յաջողութեամբ օգտուեցան աշխարհագրական հետազոտութիւններից և որոնց առաքիւն, գլխաւորապէս, կազմում են Աֆրիկան, Ովկիանիան և Ասիայի մի քանի մասերը: Այժմ ամենահարուստ թանգարաններ ունին Բերլինը, Փարիզը, Լոնգոնը, Վիեննան, Լայպցիկը, Կոպէնհագէնը, Ստոկհոլմը, Ս. Պետերբուրգը, Մոսկուան, Լէյպէնը, Ռոտտէրդամը, Հոռմը, Փլորէնցիան, Մադրիդը, Լիսաբոնը, Բրիւսսէլը, Դրէզդէնը, Միւնխէնը, Վաշինկտոնը և այլն:

Այսպիսով մեր գիտութիւնը նմանում է մի ահագին շինութեան, որի գլխաւոր մասերն արդէն կառուցուած են:

Մենք վերեւում ցայց ասինք, թէ որքան զարգացան և ընդլայնացան մեր գիտութեան անհատական մարզն ուսումնասիրող ճիւղերը: Մենք նկատեցինք, որ կազմախօսութիւնն ու բնախօսութիւնը հասան կատարեալ ինքնուրոյնութեան, և որ հոգեբանութիւնն այժմ արդէն բնական հոգի վրայ է դրուել և պիտի զարգանայ դրա վրայ, աւելի արդիւնաբերութեամբ քան մինչև այժմ:

Բայց ւմարդկութեան մասին գիտութիւնն էլ ամենաընդարձակ ծաւալ է ստացել. և այժմ մենք կարող ենք Հըպարոսութեամբ յետ նայել գէպի հրաշալի աշխատութիւնների և նշանաւոր մշակների շարքը: Մարմնաբանական մարդաբանութիւնը (COMPARATIVE ANTHROPOLOGIA) իւր ամենանշանաւոր ներկայացուցիչներն ունեցաւ Քրանսփական գալլոցում, որ են՝ այդ գալլոցի Հիմնագիր Բրոկան, բելգիացի Քեռլլէն, Քաթրֆոտը, Համին, Տոպինարը և ուրիշներ: Անգղիական գալլոցն առաւելապէս նշանաւոր է ամենազօւաբին ցեղագրական և ընկերաբանական խնդիրների հետազոտութիւններով և անմահացրել է Տալլորի, Լիւքքոկի, Մէնի, Մակ Լէնանի և ամերիկացի Մորգանի անունները: Այստեղ

պետք է յիշել և այն, զեռ ևս ոչ բարոյական Հաստատուած փորձերը, ստեղծելու ամբողջ Հասարակական սխառմանը ոչ թէ ուսուցիական կամ տեսական, ինչպէս անում էին մեր դարու առաջին տասնամեակի մասնագէտներն ու երազողները, ալլ մարդկութեան սկզբնական քաղաքակրթութեան ուսումնասիրութեան բեալական Հոգի վրայ. (Հ. Սպենսէր): Յիշեալ Հարցերի շրջանում աշխատել են և աշխատում են ուրիշ ազգերի գիտնականներ, ինչպէս՝ Ֆրանսիացի Լեաուրնո, գերմանացի Պատտ, ռուս՝ Զիրքեր, Կաւալեզովի, Կուլիշեւ և ուրիշներ: Գերմանական գաղութը տուել է ժողովրդագրութեան վերաբերեալ ամենանշանաւոր երկերի մի շարք, միացնելով ազգերի արտաքինի նկարագրութիւնը նրանց ներքին կեանքի ուսումնասիրութեան հետ: Գերմանացի գիտնականների և այս մասում կատարածները ցոյց տալու Համար, բաւական է յիշել Վայցի *Anthropologie der Naturvölker*. Lpz. 1853—1873, — զատական աշխատութիւնը: Պեշելի «*Volkerkunde*» և Ֆրէզերի Միւլլերի «*Allgemeine Ethnographie*»: Շատ Հիմնովին են ուսումնասիրել գերմանացի և Հիւսիսային գերմանացի գիտնականներ՝ Նիլսոն, Տոմսոն, Ստենարուպ, Վորսէ, Մանսխուս, Կեյլեր, Վիրխով, Ռանկէ և ուրիշ շատեր նախապատմական մարդը: Գերմանական գաղութի մասուցած նաւայութիւններից մին ևս այն է, որ նա ընկզմել է ազգերի Հոգեբանութեան Համեմատական ուսումնասիրութեան Հետաքրքիր, բայց և զժուարին Հարցի մէջ, իրեն առաջնորդ ունենալով տաղանդաւոր և չափազանց բազմակողմանի Ա. Բաստիան: Այս շրջանին է յարում Համեմատական լեզուաբանութիւնն ինչպէս ազգերի Հոգեկան կեանքի ուսումնասիրութեան ժամանակ գործադրուելիս, այնպէս և՛ նրանց բնորոշելիս:

Այս գիտութիւնն առաջինը կարգել են մօքի փիլիսոփայական ընդարձակութեամբ Յր. Ելէգէլ և Վ. Հումբոլդ, և այժմ մշակում են Յր. Միւլլեր, Շտէյնթալ, Պատու և ուրիշներ ¹⁾:

¹⁾ Դ Յմախու Դ Ալլուս և Լատիս առաջին են շարք զին լեզուաբանութիւնն ազգերի գաղութութեան մէջ:

Այս է ընդհանուր առմամբ մեր գիտութեան գրութիւնը։ Նա ամբասնդում է։ Արգեօք այս գիտութիւնը հասել է իւր վերջնական կէտին։ Ինչպէս վերը ցոյց տուինք, արդի մարդաբանութիւնը ձգտում է աւելի նիւթեր հաւաքելու, քան թէ նրանց դասաւորելու։ Գերմանական գպրոցի մարդաբանների յարգելի առաջնորդ Ա. Բաստիան իւր բազմաթիւ երկերի մէջ եռանդով կրկնում է. «նիւթերի գասակարգութիւնն ինքքն իրեն կը գայ, սրա համար միշտ ժամանակ կը լինի։ Երբ շինութիւնը կըրկով բռնկուած է, ինչպէս այս կարելի է առել նախնական, շուտով անհետանելի ժողովրդների ցեղազրութեան մասին, պէտք է առանձին հոգեկան լատկութիւններ ունենալ, որ կարելի լինի ինքնագոհ և հանգիստ կերպով ողորկել և մաքրել շինութիւնը, մինչդեռ անհրաժեշտ է ամենեւեց առաջ շտապով ազատել այն բոլորն, ինչ որ դեռ կարողացել է մնալ 1)»։



Գ. ՎՈՒԽ

ՄՈՐԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՍՏԵՄՆԵՐ.

Մարգարանութեան որչափ ֆրանսական, անգլիական, գերմանական զորքները համեմատ.—Մարգարանութեան ինգլիսները բարգաւթիւնը.—Անտառական և ընկերական որդանիցմի մարգարանութիւն.—Անտառական որդանիցմի մարգարանութիւն՝ կազմութեամբիւն, բնութեամբիւն, կազմութեամբիւն.—Շնկերական որդանիցմի մարգարանութիւն՝ ազգայնութիւն, ընկերականութիւն.—Մարգարանութեան նշանակութիւնը.—Մարգարանութեան յարաբերութիւնն օժանդակ գիտութիւններին՝ աշխարհագրութեան և դատաւթեան—նշանակական մարգարանութիւնը մարգարանութեան համար:

Մենք տեսանք թէ ինչպէս մարգարանութիւնը, մարգու մասին գիտութիւնը, շնորհում էր, և մենք պարտաւոր էինք խոստովանելու, որ այս գիտութիւնն այժմ արդէն կատարելապէս ցոյց է տուել իւր գոյութեան իրաւունքը:

Այս, մարգու մասին մենք գիտութիւնը կրում է մարգարանութիւն տեսնելու, Սրան համաձայն են բոլոր հեղինակաւոր գիտնականները, չնայելով որ մարգարանական բառագիտութիւնը շատ անհաստատ և մեր գիտութեան զանազան մասերի դատակարարութիւնը միմեանց սաստիկ հակասում են:

Մարգարանութեան այդպիսի լայն որոշումն տուեց և՛ ֆրանսիական դպրոցը, որ, ինչպէս լիշեցինք, մարգուին մարմնաբանական տեսակէտից ուսումնասիրելու ամենաարարձր զարգացման է հասել: 1838 թ. Սէրրը ուսուցչապետ կարգուեց Փարիզի թանգարանում մարգարանութեան կամ մարգու բնական պատմութեան: 1839-ին Եզգարսը որոշում էր մարգարանութիւնն ինչպէս ֆիզիքական և հոգեբանական

տեսակէտից մարդը ուսումնասիրող մի գիտութիւն։ Բրոկայի խոսքերով, մարգարանութիւնն չայն գիտութիւնն է, որի առարկան կազմում է մարդկանց խումբը և որն ուսումնասիրում է այդ՝ սկսելով անհատներից և համեմատելով նրան բնութեան հետ ¹⁾, կամ, ինչպէս մի ուրիշ տեղ ասում է, մարգարանութիւնը մարդու բնական պատմութիւնն է, մուծելով այստեղ և նրա հոգեկան ու հասարակական կեանքը։ Մրանսիական գալրոցի մարգարանների միւս առաջնորդ Քաթրիֆտը մարգարանութիւնն որպէս մարդու բնական պատմութիւն որոշելով, նկատում է, որ ուսումնասիրելով մարդկանց զանազան խմբերը, մարգարանները չպէտք է ուսումնասիրեն մարդուն միայն ֆիզիքական տեսակէտից. նրա հոգեկան և բարոյական կեանքն էլ, իւր հերթին, միեւնոյն ուշադրութիւնն է պահանջում։ Նաև Տոպինար ուսուցանում է, թէ մարգարանութիւնը բնական գիտութիւնների մի ճիւղն է, որ զբաղւում է մարդով և մարդկային ցեղերով. մարգարանութիւնը բառիս նեղ մաքով կարող է կոչուիլ մարմնաբանական։ Բէէ և Տոպինար իւր գրութիւնների մէջ սոսկ մարմնաբան է համարանում, բայց իւր սկսած հիմնայի *Revue d'Anthropologie* հանգէտը շատ ընդարձակ ծրագրով է առաջնորդւում։ Խնդիրների այս ընդարձակութիւնն աւելի որոշ կերպով արտայայտուած է Ֆրանսիական գալրոցի մարգարանական նշանաւոր բառարանի մէջ ²⁾։

Անգղիական գալրոցի մարգարաններն ևս միեւնոյն լայն որոշումն են տալիս մարգարանութեան։ Այսպէս Բէնգիլը, մարգարանութեան համառօտ պատմութեան հեղինակը, ասում է, թէ մարգարանութիւնն ընդգրկում է ինչպէս մարդու սկիզբը, այնպէս և՛ նրա յետագայ խնդիրները, նրա ցեղերի բաժանուելը, ինչքան որ այս մասին է գիտութեան։ Ջեմս Լիւնս որոշում է մարգարանութիւնն որպէս մարդու աւարտի՝ բնութեան մասին խօսող մի գիտութիւն։ Լոյս-

¹⁾ Broca. Diction. encycl. des sciences médicales. Paris, 1886. t. V. P. I. pp. 276.

²⁾ Dict. des sciences anthropologiques. Vide Anthropologie Ch. Letourneau p. 38 et suiv.

կաւոր ձեռն Լիւբրոկ մարգարանութիւնն ու ցեղագրութիւնը մի է համարուի: Միւսոյնը և Տալլոր, որի համար մարգարանութիւնը մարգու և քաղաքակրթութեան մասին մի գիտութիւն է ¹⁾: Միւսոյն տեսակ հասկանում են մարգարանութիւնը և անգղիական մարգարանական հանգէտները, ինչպէս «The Journal of the anthropological Institute», «Anthropological Reviews» և այլն:

Խօսելով գերմանական գալլոցի մասին, մենք արդէն կարող ենք լինել Բէրի մեր առաջ բերած նկատողութիւնը, թէ մարգարանութիւնն ընդգրկում է մարգու ամբողջ կեանքը: Մարգարանութիւնն, ըստ Վալտցի, բառիս բուն նշանակութեամբ ձգտում է ընդհանրապէս մարգու մասին գիտութիւն կամ, աւելի որոշ առած, մարգու էութեան մասին ուսուցումն դառնալու ²⁾: Մարգարանութիւնն զբաղւում է մի կողմից կազմախօսական, բնախօսական և հազերանական, միւս կողմից քաղաքակրթութեան պատմութեան և սրան յարակից գիտութիւնների խնդիրներով: Յայտնի գտնաբան Գ. Վէլիէր ասում է, որ մարգարանութիւնն հետազոտում է մարգուն իւր բոլոր ամբողջութեամբ, թէ կազմուածքը և թէ նրա գործունէութիւնը: այս վերջինին վերաբերում են լեզուն, բարբը և մինչև անգամ մարգկութեան ամբողջ քաղաքակրթութիւնն ու պատմութիւնը: Վիրխովն ուսուցանում է, թէ մարգարանութիւնը՝ բառիս ընդարձակ մտքով, ընդգրկում է մարգու ամբողջ, թէ ֆիզիքական և թէ հոգեկան կեանքի ուսումնասիրութիւնը ³⁾: Այս միւսոյն որոշմանն են գալիս ոչ միայն գտնաբաններ, այլ և Գերլանդի և Բատիանի նման ոգևորուած ցեղաբանները: Գերլանդ առբերում է մարգարանութիւնը, բառիս ընդարձակ մտքով, որպէս բնական էակ մարգու մասին գիտութիւն, և մարգարանութիւն, բառիս նեղ մտքով, որպէս կենսաբանական

¹⁾ Taalstra, Auprenonoria, 1883 էր. 1.

²⁾ Walts, Anthropologie des Naturvölker, 1858 էր. 1.

³⁾ R. Virchow, Anleitung zu wissenschaftlichen Beobachtungen, herausgegeben von Neumayer, Berlin, Oppenheim, 2 Aufl. 1888, S. 258.

կենդանաբանութիւնն¹⁾։ Բնութիւն մի որոշ աստիճանի նոյնացնում է մարդաբանութիւնը ցեղաբանութեան հետ։ Նա որպէս մարդաբանական գիտութիւններին օժանդակող գիտութիւններ լինում է սոցոլոգիանութիւնը, աշխարհագրութիւնը, բնախօսութիւնը, կազմախօսութիւնը, հնախօսութիւնը, մանուանց որքան սա վերաբերում է նախապատմական շրջանին, հասարակական բնութարանութիւն ունեցող գիտութիւնները, ինչպէս պատմութիւնը՝ կրօնական վարդապետութիւնների հետ միասին և փիլիսոփայութիւնը, իրաւաբանական կանոնադրութիւնները և քաղաքականութիւնը, էսթետիկ և զեղեցիկ արուեստները, արհեստագիտութիւնն (TECHNOLOGIA) և արհեստները։ Վերջապէս Բերլինի կազմախօս Հարամներ մարդաբանութեան խնդիրներն իրենցում է մինչև ւմարդկային սեռի մենագրութիւնը և բողոքում է, որ նրան հակադրուէին ազգագրութիւնն կամ ցեղագրութիւնը։

Կարծում ենք, որ մեր այս ծանրակշիռ քաղուածները պիտի կարողանան հերքել այն ընթացիկ կարծիքը, թէ մարդաբանութիւնը մի շատ նեղ, բացառապէս մարմնաբանական գիտութիւն է։

Մարդաբանութիւնը—մարդու մասին գիտութիւն է։ Այս գիտութեան խնդիրը՝ մարդու բնութիւնն հասկանալն է։ Մարդաբանութիւնը մարդու բնական գիտութիւնն է։ Ըսյց տարակոյս չկայ, որ մարդ զաղափարն աշխարհիս ամենաբարդ զաղափարներին է պատկանում։ Լիննէլ քարերի, բոյսերի և կենդանիների համար բնորոշ նշաններ որոշելով, մարդուն նշանագրեց հետեւեալ իմաստայից խօսքով. *nosce te ipsum*—ծանիր զքեզ։ Հետեապէս մարդու ուսումնասիրութիւնը չի կարող բաւականանալ միայն այն արտաքին նշանաբանութեամբ, որով մինչև այժմ սահմանափակւում էին բնական գիտութիւնները։ Արդէն Պրոտագորաս ուսուցանում է, թէ ւմարդն ամէն բանի չափն է։ Իւր զգացողութեամբ, որովհետեւ ամէն ինչ մեզ համար այն է՝ ինչ որ մեզ թւում

¹⁾ G. Gerland. Ueber das Verhältniss der Ethnologie zur Anthropologie. Verhandlungen des zweiten deutschen Geographentages. Berlin, Reimer 1892, S. 54—55. Ըստ չնդգրկուած տառն զմեզին պատկերէ զմեզ

է, այսինքն ինչպէս որ մենք նրան զգում ենք: Մարդուց են բղխում բնութեան մասին մեր բոլոր գաղաղութիւնները, մարդու մէջ են ցոյանում այս աշխարհային բոլոր երեւոյթները, մարդը, կարծես, մի փոքրիկ աշխարհ (microcosme) է հանգիստանում եթէ ոչ համայն տիեզերքի, գոնէ նրան չընթացատու այս մեն աշխարհի (macrocosme): Մարդը, որպէս անհատական և որպէս հասարակական էակ միմեանցից բոլորովին տարբերւում է. ուստի և մարդարանք պէտք է ուսումնասիրէ մարդուն որպէս առանձին և որպէս հասարակական երեւոյթ:

Մարդարանութեան առարկան ոչ միայն սաստիկ բարդ, այլ և չափազանց բազմազան է նրա կրած պատմական փոփոխութիւնները պատճառով. մարդարանութեան առարկայի ուսումնասիրութեան գիւլարութիւնը կայանում է ոչ միայն մեր ցոյց տուած բարդութեան և փոփոխութեան մէջ, այլ և այն ենթակայականութեան (subjectivité), որից զերծ չի մնում ոչ մի հետազոտող:

Բայց խոսելով մարդու բնական պատմութեան մասին, մենք ամենից առաջ պէտք է քննենք այն հիմնական խնդիրները, որ ներկայանում են ամէն մի օրգանիզմ ուսումնասիրելիս:

Մենք արգէն ապացուցինք, որ մարդու բնական պատմութիւնը բաժանւում է երկու մեծ մասի, մին ուսումնասիրում է մարդուն որպէս անհատական, միւսն որպէս հասարակական օրգանիզմ:

Անհատական օրգանիզմն ուսումնասիրելիս՝ մենք ամենից առաջ ուշադրութեան ենք առնում նրա մարմինը, կազմուածքը, որով նա տարբերւում է ուրիշ օրգանիզմներից: Այս պատճառով էլ անհատական մարդու մարդարանութիւնը ներփակւում է՝ որպէս մի հիմնական գիտութիւն՝ կազմախօսութիւնը, այսինքն մարդու մարմինն նկարագրող և ֆիզիքական տեսակէտից նրա միւս օրգանիզմների շարքում բռնած տեղն որոշող գիտութիւնը:

Իսկ եթէ մենք սկսենք ուսումնասիրել մեզ իւր կազ-

մութեամբ յայտնի օրգանիզմի կենսական երևույթները, մենք կը մտնենք աւելի բարձր կարգի, կազմախօսութիւնն իւր մէջ ներփակող գիտութեան, բնախօսութեան մէջ: Բայց այս կենսական երևույթները մեզ կը տանեն աւելի բարձր գառակարգի, հոգեբանական երևույթների շրջանը, որոնք կառավարում են օրգանիզմը, միանգամայն կախուած լինելով նրա կազմախօսական և բնախօսական առանձնայատկութիւններից: այսպիսով մենք կը հասնենք հոգեբանութեան, օրգանիզմի հոգեկան երևույթներն ուսումնասիրող գիտութեան:

Այս երեք գիտութիւնները մեզ յիսկատար զաղափար են տալիս անհատական մարդու մասին: Սրանք այնքան զարգացել են, որ կարող են կատարելապէս ինքնուրոյն գիտութիւններ համարուիլ: սակայն և այնպէս՝ սրանց միջի կապակցութիւնն ամենափոքր տարակուսանքի անգամ անդիք չի տալիս: անտարակուսելի է նաև այս երեք միացեալ գիտութիւնների վերջնական նպատակը՝ ուսումնասիրել անհատական մարդն իւր ամբողջ էութեամբ:

Այժմ անհատական մարդու նախատիպ վերցնում են եւրոպացուն, որովհետև նրան է վերահսկուել առաջնորդող դեր կատարել քաղաքակրթութեան մէջ, սակայն որան հակադրում են ոչ նման և նոյն իսկ միմեանց տննման տիպեր, ուստի և պէտք է գոյութիւն ունենար մի գիտութիւն, որ լեռնուելով մեր լիշտն բոլոր գիտութիւնների անհատական մարդու մասին հաւաքած տեղեկութիւնների վերայ, մարդկութեան համար անէր այն, ինչ որ արել է կենդանաբանութիւնը կենդանական աշխարհի համար, այսինքն նկարագրել մարդկային անհատների օրգանիզմական տարբերութիւնները և այս յատկանիշների վրայ հիմնուած գասաւորել մարդկութիւնը խմբերի, տիպերի կամ ուրիշ խօսքով, գասակարգել ըստ ցեղերի: Այս, մարդկութիւնն ուսումնասիրող գիտութիւնների շարքում առաջին գիտութիւնը մենք կոչում ենք ազգագրութիւն, այսինքն ազգերի նկարագրութիւն:

Դասակարգելու համար անհրաժեշտ են որոշեալ յատ-

կանիչներ: Այս յատկանիչները մեզ ամենից առաջ տալիս է կազմախօսութիւնը: Եւ յիշուի, զանազան ազգերի համեմատական կազմախօսութիւնն ահագին տարբերութիւններ է ներկայացնում առանձնապէս կմախքի և գանգի, ինչպէս նաեւ, ուղեղի կազմութեան, կաշու և մազերի գոյնի. քիթի, աչքի ձևի և ուրիշ բաների մէջ: Այսպիսով մենք ունինք մի շարք արտաքին յատկանիչներ, որ քիչ թէ շատ հեշտութեամբ նկատելի են հէնց արտաքինից: Մի որոշ կարգի գիտնականների գէպի մեքենայական աշխատանքը տանած հրապոյրը, և միւս կողմից չափական մեթոդների թուացող ճշտութիւնը պատճառ եղան բազմաթիւ հետազոտողների չափումներ անելու, և չափելու եղանակը, որ կրում է ամբողջափութիւնն անունը, համարեա մի առանձին նշանակութիւն ստացաւ. բայց այս չափումների մէջ գանգինը, որպէս մասնագութեան օրգան ուղեղի ընդունարան, այնպիսի նշանակութիւն ստացաւ, որ բաժանուելով առանձին մաս կազմեց՝ զանգարանութիւն անունով:

Ազգագրական դասակարգութիւնների բնութոյսական կողմը, որպէս հեշտութեամբ չգննուող, մինչև այժմս՝ աստիկ անբաւարար կերպով է մշակուած: Համեմատական բնութօսութիւնը համարեալ թէ գոյութիւն չունի. թէև մեղաւորը մարդաբանները չեն: Բայց և այնպէս, միբաժարի, կլիմայի, կերակրի, ցեղի ազդեցութեան մասին խնդիրներն անհրաժեշտ և անխուսափելի լրացուցիչներ են համարուում ցեղերի արտաքին նկարագրութեան: Այս արտաքին յատկանիչների ամենահետաքրքիր կէտը կայանում է գրանց յառաջանալու պատճառների մէջ, իսկ սա զուտ բնութօսական հարց է:

Դասակարգելիս, մենք վերջ՝ ի վերջոյ գիմում ենք մարդաբանական յատկանիչների երրորդ կարգին, որի հիմունքը հոգեբանութիւնն է: Այստեղ մեր ուշադրութիւնն ամենից առաջ կանգ է առնում ընդունարանական, իսկ յետոյ հոգեկան կեանքի և մինչև անգամ նիւթական քաղաքակրթութեան ազդեցութիւնով յառաջացած երևոյթների յատկանիչների վրայ:

Բայց այս վերջին երևույթներն ամբողջապէս չեն ուսումնասիրուած ազգագրութեան մէջ, որի խնդիրը կազմուած է ազգերի նկարագրութիւնը և այն էլ, այսպէս ասած, արտաքին կողմը, այլ ցեղագրութեան, որի նպատակն է ուսումնասիրել ազգերի կեանքը: Այս պատճառով, ցեղագրութիւնը մասամբ բնախօսութեան է համապատասխանուած, բայց, ի հարկէ, բարձր կարգի գիտութիւն է հանգիստանում, և ներփակուած է ոչ միայն անհատական մարդուն վերաբերեալ բոլոր գիտութիւնները, այլ և ազգագրութիւնը: Այսպիսով ցեղագրութիւնն ուսումնասիրուած է նիւթական քաղաքակրթութիւնը, հասարակական կազմակերպութիւնը, կրօնական հայեացքները և արուեստների ու գիտութիւնների արած յոռադիմութիւնը:

Բնախօսին չի կարելի շփոթել ազգագրութիւնն ու ցեղագրութիւնը: Փրանսիական զայրոյցն այս կէտի վերաբերմամբ անհամեմատ աւելի ճիշտ է, քան օր. գերմանականը: Բաժանելով մարդաբանական նիւթերն ազգագրութեան և ցեղագրութեան մէջ, մենք զուշանում ենք այս տերմինների ստուգարանութիւնից և միանգամայն ֆրանսիական զայրոյցի գրանց տուած նշանակութիւնից: Այս կամ այն տերմինն ոչնչացնել, ինչպէս շատ անգամ առաջարկուել է ամենափոքր կարիք անգամ չկայ: Երկու տերմինն էլ արգէն կատարելապէս տարանուած են. անհրաժեշտ է միայն որոշ նշանակութիւն տալ իւրաքանչիւրին, անհրաժեշտ և վերին աստիճանի բնական է փաստական նիւթերը գտնուորել արտաքին նկարագրութեան և բարձր ու վարձի ուսումնասիրութեան ¹⁾:

¹⁾ Ազգագրութիւն բառը ազգերի նկարագրութեան իմաստով լատ. սեզմ գործածուել է ԺԸ. զարի վերջում (Bastian, Vorgeschichte, էր. 15, Topfhard, Un mot sur l'histoire de l'Anthropologie en 1788, Revue d'Anthropologie, 1888 № 2, էր. 199) բայց, գորագործող այս բառը լատ. շուտով քննարկել նշանակութիւն է ստացել և, այսպէս ասած, կոտորւած է ամբողջ մարդաբանութիւնը: Այսպէս համակերկ ֆինկալցի Կասթին (1813—1852) ազգագրութիւնն հասկնում է որպէս շրջի, կառավարութեան կազմակերպութեան, բայց ու վարքի, ազգերի բնակարանների, մի իւրով նրանց արտաքին և ներքին կեանքի վերաբերող բոլոր բաների գիտութիւնը: Կասթին է, ասում է նա, ազգագրութիւնը քաղաքակրթութեան գտնութեան մի մասն համարելը (Castrin, Ethnologische Vorlesungen, Akademische Ausgabe, B. W. St. Petersburg 1855 էր. 7):

Սակայն միայն ազգագրութիւնն ու ցեղագրութիւնը չեն ամփոփում մարգկութեան մասին եղած բոլոր գիտութիւնները:

Մարգու ոգին չի շատանում միայն փաստերն հաստատելով ու ուսումնասիրելով, անհատական երևոյթներն համեմատելով ու բացատրելով: Մարգու ոգին ձգտում է միացնել իւր առանձնապէս ուսումնասիրածները, որպէս զի ընդհանրացնէ և գիտական օրէնքների ենթարկէ: Այսպիսով մենք հասնում ենք այն գիտութեան, որ մարգաբանութեան բոլոր լիշտն ճիւղերի համար վերջին խօսքն է, որ միացնում է իւր մէջ մեր նիւթի, քալլ առ քալլ վերածնող, ամբողջ հոգեկան կեանքը, և իմանում է այս նիւթերի հիմք կազմող բնական օրէնքները: Սա պէտք է այն գիտութիւնը լինի, որ ամփոփէ իւր մէջ անցեալ և ներկայ մարգկութեան ամբողջ կենսական իմաստութիւնը, և միանգամայն բանալ մեզ ինչքան որ կարելի է, մարգու տալագան:

Այս գիտութիւնն ընկերաբանութիւնն (Sociologie, Co-

Տիւս կողմից ցեղագրութիւնն է ազատում տնայն մարգաբանութիւնը կայ ապրու, որովհետեւ Քասթիան տնայն մասին գիտութիւնն է համարում այդ (Bastian, Vorgeschichte etc. 8. 22) և նրա մէջ է ուղում զանկ տնայն մասին գիտություն խոստացած և երկայ ժամանակից է վեր ցանկայն գիտութիւնը (A. Bastian, Die Ethnologie und deren Aufgabe, Verhandlungen des I. Deutschen Geographentages, Berlin, Reimer 1882, 8. 47). Քասթիան հարկուար է նկատել, որ Քասթիան ցեղագրութեան մէջ պահարում է առանձնապէս ազգերի հոգեկան կեանքի: Հառ Ներլանդի, ցեղագրութիւնը համարում է տնայնգրութեան նա, և առանձնաբարում է թէ ազգերն պիւպէս անկեմանքն, ինչպէս զայնութիւն անկն, ինչպէս զարգացած և ինչպէս կազում են միմեանց նա, առ մի ընկերաբանական գիտութիւն է դրական հոգի վրայ դրում, եւ ննկ տնայն առած մարգաբանութեան և գաղմութեան միջին տեղն է բանում (G. Gorland, Ueber das Verhältniss der Ethnologie zur Anthropologie, Verhandlungen des II. Deutschen Geographentages, Berlin, Reimer 1882, 1882, 8p. 54—55):

Ազգագրական հանգիւնը այս երկու բաների որումն վերաբերութեան հետեւում է փրանսիական զարգիւն.—Ազգագրութիւնը միմայն մի ազգի, եւս վարդ ու բարդի, ազգութիւնների, հաստի, ինչպիսի, փրկիական յատկութիւնների և գաղմական մարգան նկարագրի են, իսկ ցեղագրութիւնը (Ethnologie) իսա ազգերի համեմատական առանձնաբարութիւնն այդ միմայն կողմերից: Մեղագրութիւնը զրազում է ազգերի բարդութիւն տարրերի, մարգան և ազգագրութեան հարցերով (Topikard Anthropologie 8p. 7): եւս ընկում է միմայն երկայնից զանազան ազգերի մէջ և զարս ինքում ընկեմեայ օրինակներ:

ԱՅՈՅՈՅԻՆ) է, մարդկային ընկերութիւնների մասին խօսող գիտութիւնը։ Արտ խնդիրը չի կայանում անանձին խմբերի նկարագրութեան կամ ուսումնասիրութեան, այլ ամբողջ մարդկութեան կեանքի իմաստի և արժէքի որոշման մէջ։ Ընկերարանութեան, մեր գիտութեան այս թաղի մէջ, ինչպէս բազում նորից հաւաքուած են մարդաբանական տեղեկութիւնների ամբողջութիւնը, այս տեղեկութիւնները գործադրուած են ճանաչելու տնհարը, բայց սա, անշատուած, միայնակ չէ, սա հաւաքական անհատ է։ Նւ ինչպէս որ հոգեբանութիւնը վճռուած է մարդու էութիւնը, որպէս անհատի, այնպէս էլ ընկերարանութիւնն աշխատում է վճռելու այն զազանիքը, որ կայ մարդկութեան գոյութեան և պատմութեան մէջ։ Վկն որէնքները, որոնց համաձայն զարթնում և հասունանում է առանձին անհատի կեանքը, առում է Վիլհելմ Պոն-Նումբուրգ, կարելի է հոգու բնախօսութիւն կոչել։ Այդպիսի որէնքներ պէտք է, որ ամբողջ ազգութեան համար ևս գոյութիւն ունենան։ Եղան էլ այնքան անհատական էակ է հանգիստանում, որքան և մի անձնաւորութիւնը։ Այսպիսի որէնքներ պէտք է գոյութիւն ունենան և ամբողջ մարդկութեան համար, որ նայնպէս այնքան անհատական էակ է հանգիստանում, որքան և մի անձն ու ազգութիւնը։ Այսպիսով, ընկերարանութիւնը մարդաբանական գիտութիւնների շարքում ամենաբարձր և վերջին գիտութիւնն է հանգիստանում։ Նրա բազանդակութիւնն ամենից աւելի փոխադարձական է։

Առանձնորիցս հետևում է, որ մարդաբանութիւնն ամենաբարձր և ամենազգուարին, ինչպէս նաև՝ ամենանշանաւոր գիտութիւններից միին է։ Մարդաբանութիւնն որպէս մարդու մասին ամենաընդհանուր գիտութիւն, միւս գիտութիւններից շատերի համար ծայրակէտ է ներկայանում, առում է Բէրքը։ Սակայն մեզ թւում է, թէ մարդաբանութիւնը, գործադրելով միւս գիտութիւնների եզրակացութիւնները՝ պարզելու ամենաէական, մարդկութեան բազդին և կեանքին վերաբերող հարցերը, այնքան ծայրակէտ չի ներկայանում, որ-

քան վախճանակէաւ: Յամենայն զէպս, Բէրն հիշաւ է առում, որ շատ զժուար է զանել մի ալնպիսի հետազոտութիւն, որ ինքնաքննութիւնից աւելի արժանի լինէր ազատ և մասնող մարդուն ¹⁾: Բայց մարդաբանութիւնն միայն փիլիսոփայական կամ զուտ գիտական հետաքրքրութիւն չէ ներշնչում մեզ, այլ ընդհակառակը, որպէս մարդու և մարդկութեան մասին գիտութիւն, պէտք է գործնական շատ մեծ նշանակութիւն ունենայ:

Մարդաբանութեան այս նշանակութիւնն երևում է ամենից առաջ այն սերտ կապից, որ կայ ոչ միայն իւր կազմող մասերի, կազմախօսութեան, բնախօսութեան, հոգեբանութեան, ազգագրութեան, ցեղագրութեան և ընկերաբանութեան, որոնցից ամէն մինը գործնական ահագին նշանակութիւն ունի, այլ և օժանդակ գիտութիւնների մէջ:

Մարդաբանութիւնն անկարելի է առանց իւր օժանդակ գիտութիւն՝ աշխարհագրութեան: Այս երկու գիտութիւնները զուգընթաց են զարգանում: Մարդաբանութիւնը նմանք է առնում՝ երբ մարդը զննում է իրեն շրջապատող բնութիւնը, նա գիտութեան ձև է ստանում, երբ որոշում է մարդու բնութեան մէջ բռնած գիւրքը, և բնութեան ու մարդու միմեանց վրայ ունեցած ազդեցութիւնը: Միւս կողմից, մարդուն, իրեն շրջապատող բնութեան յարաբերութեամբ և յիշեալ կողմերից ուսումնասիրելը կարելի է այդ տեղի կազմակերպութիւնն ու կեանքը հասկանալու ամենաճիշտ եղանակներից մին համարել ²⁾: Մարդաբանութեան և աշխարհագրութեան անմիջական միացման գաշա հանգիստնում է մարդա-աշխարհագրութիւնը (Anthropogeographie, ANTHROPOGEOGRAPHIE), որ ուսումնասիրում է մարդու և բնութեան յարաբերութեան օրէնքները:

Աշխարհագրական նիւթերի ազգագրականի և ցեղագրականի հետ խառնուելուց յառաջացաւ ժողովրդագրութիւնը:

¹⁾ Boer, Anthropologie etc. 8. 1. «the proper study of mankind is man», առում է Պագը:

²⁾ Եւրոյ: ՅԱՃԱՆԻ ՄԱՐԿՈՎ ԽՈՐԱԳՐԱԿԱՆ ԵՐ. 608.

(Völkerkunde, народовѣдѣніе), որ ձգտում է բնութեան և ազգերի կեանքի լիակատար նկարագիրը տալու: Այս գէպքում աշխարհագրական պայմանները կազմում են այն հզոր, որի վրայ ծաղկում է ժողովրդական կեանքը:

Մարգարանութիւնը նոյնպէս շատ մօտ է պատմութեան, որովհետեւ մարգարանութիւնն աշխարհագրութեան հետ միասին ¹⁾, պատմական գէպքերն լաւ բմբռնելու բնական միջոցն է ²⁾: Միւս կողմից պատմութեան եզրակացութիւններն անմիջապէս զօրծ են գրւում մարգարանութեան վախճանական խնդիրները լուծելու: Գուցէ կարծէին, թէ մարգարանութիւնը որպէս մարդու մասին գիտութիւն՝ իւր խնդիրների մեծութեան պատճառով պէտք է նկատէր պատմութիւնը, որպէս իւր քաղկացուցիչ մի աննշան մասն: Սակայն չէ՛ որ այսպէս անուանուած պատմութիւնը մարդկութեան պատմութիւնը չէ, այլ կրթուած ազգերի վիճակի նկարագիրն: Ուստի մարգարանութիւնը պատմութիւնիցն ամենից առաջ հետաքրքրւում է քաղաքակրթուած ազգերի կեանքի այն եզրակացութիւններից, որոնք կարող են աւելի հասկանալի դարձնել մարդկային ցեղը կամ մի որոշ ազգութիւն: Մարգարանութիւնը թող տալով պատմութեան իւր իսկ սեպհական եղանակներով ուսումնասիրել քաղաքակրթուած ազգերի պատմական կեանքի մանրամասնութիւններն և ռաուելով այս աշխատանքների արդիւնքից, իրեն է վերապահում ուսումնասիրել ինչպէս ժամանակակից գրութիւնը, այնպէս և՛ նախապատմական շրթանը: Այս գէպքում մարգարանութիւնը կատարելապէս զօրծագրւում է ուսումնասիրութեան իւր սեպհական եղանակներն — անմիջապէս գիտել, փորձել և համեմատել: Բնաստիւն ³⁾, քննելով թէ ինչ ազգեր պիտի ենթարկուին մարգարանութեան ուսումնասիրութեան, գալիս է այն եզրակացութեան, որ նրա առարկան լինելու են ամբողջ Ովկիանիան, Ամերիկան իւր անցեալով, Աֆ-

¹⁾ В. Берг. Задача научной географии стр. 416.

²⁾ Th. Waila, Anthropologie der Naturvölker B. 1, S. 16.

³⁾ Басин Vorgeschichte S. 64—61.

րիկայի մեծ մասը, Ասիայի զանազան մասերը և Եւրոպան, իւր կէս կամ նախապատմական շրջանում ²⁾։

Այս կարծիքը, 'ի հարկէ, շատ պատահական է։ Մենք քաղաքակրթութեան ազգերին բոլորովին չենք հեռացնում մեր գիտութեան սահմանից։ Ընդհակառակը, նրանց ուսումնասիրելով, մենք նիւթ ենք ձեռք բերում, որ աւելի թանգագին ու աւելի կենդանի է, քան հետեւ մեզ աւելի հեշտ է թափանցել քաղաքակրթութեան մարգու հոգու մէջ։ Մեր գիտական գրականութեան մէջ շատ զգալի է քաղաքակրթութեան ազգերի մարգարանութեան վերաբերեալ աշխատութիւնների պակասութիւնը։ Միայն վերջին ժամանակներս եռանդով ձեռնամուխ եղան այս տեսակ աշխատութիւններին, որ, մեր կարծիքով, գիտութեան համար շատ թանգագին են։

Բայց Բաստիան ¹⁾ իրաւունք ունի ասելու, թէ մարգարանի առաջին գործը՝ տիպընական զաղափարն ըմբռնելն է։ Ուստի մարգարանն ամենից առաջ 'ի նկատի պիտի ունենայ նախնական մարդկանց սիստեմատիքական ուսումնասիրութիւնը, որպէս զի հանաչէ այս պարզ օրգանիզմների մէջ հիմնական զաղափարն այն բոլոր ձևերի, որ ամէն տեղ մեծ կամ փոքր չափով հասարակական օրգանիզմի հիմնական տարրեր են հանգիստնում։ Նախնական ժողովրդների ուսումնասիրութիւնը քանակի է ծառայում, որով բացւում է մեր առաջ բարձրագոյն ձևերի ամենաբարձր կազմութիւնը ²⁾։

Մարգարանութիւնն սկսելով այս սկզբնական ձևերից և օգտուելով իւր տարրերի համեմատաբար բազմազանութիւնից, երբեմն անմիջական գիտողութիւնով ու փորձով, երբեմն համեմատական ամենազօրեղ եղանակով, ձգտում է լուծելու մարդկութեան ամենաբարձր խնդիրները։

Մարգարանութիւնն աշխատում է գտնել թէ ինչ է մարգը, որտեղից է և ուր է ձգտում։ Մարգարանութիւնը բնական—գիտական և միանգամայն փիլիսոփայական մի գիտութիւն է։

¹⁾ Bastian Die Ethnologie und deren Aufgabe etc. S. 52.

²⁾ Ուղ. էջ. 51.